

ԵՐԱԿՐԹՆԵԱ

ՄԱՅՐԱՍԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ



Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի հայրենիս եւ ի սփյուռս,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից տարեմուտի տոնական բերկրությամբ ողջունում ենք ձեզ եւ բերում հայրապետական Մեր օրհնությունը։

Մեր սրտերն այս պահին լի են բարի ակնկալիքներով, առ Տերն աղոթքով եւ Տիրոջ պարգևների հայցով։ Բոլորիս մաղթանքն ու ցանկությունն է, որ Նոր տարում ձեռքբերումներն ու ուրախությունները բազմապատկվեն, մտահոգությունները փարատվեն, զորանա մեր հայրենիքը, ամուր լինեն մեր ընտանիքները, բարօր ու ապահով ապրի աշխարհասփյուռ մեր ժողովուրդը։ Նվիրական այսպիսի զգացումներով ենք քայլ կատարում Ամանորի սեմից ներս՝ անդրադառնալով նաեւ անցնող տարվան։

2017 թվականին մեր ժողովուրդը ջանք ու աշխատանք գործադրեց՝ հաղթահարելու իր կյանքի խնդիրները, բարօրության եւ առաքելության մեջ հաստատելու մեր երկիրը։ Աշխատավոր, մտավորական, գործարար, պետական գործիչ՝ ամեն ոք իր ասպարեզում ջանք գործադրեց՝ իր նպաստը բերելու մեր ժողովրդի առաքելության։ Հայրենյաց սահմանները քաջությամբ պաշտպանեցին մեր բանակի խիզախ զինվորները՝ երաշխավորները մեր ժողովրդի խաղաղ ու ստեղծագործ կյանքի։ Հոգեւոր-եկեղեցական մեր անդաստանը նույնպես արդյունավորվեց եկեղեցականների բարի ծառայությամբ, մեր ժողովրդի զավակների հավատավոր ընթացքով ու եկեղեցանվեր ձեռնարկներով։ Տիրոջ ողորմությամբ դժվարությունները մեզ չընկճեցին, իսկ ձեռքբերումներով առավել հուսադրվեցինք։ Մեր ժողովրդին կորով ու գործելու եռանդ պարգևեցին մեր երկրի, ազգի, մեր երեխաների հանդեպ սերը, լուսավոր գալիք կերտելու մեր իղձերն ու տեսլականը։

Եկող՝ 2018 թվականին մենք տոնելու ենք 100-ամյակը Հայաստանի առաջին Հանրապետության հաստատման եւ մայիսյան հերոսամարտերի։ Մեկդարյա այս ժամանակաշրջանում մեր ժողովուրդն ազգային կյանքի բարձրացման մեծ ճանապարհ է ան-

ցել։ Այդ տասնամյակները, բազում դժվարություններով հանդերձ, եղան պետականաշինության, հայրենակերտումի, գիտության, կրթության, մեր մշակույթի զարգացման, ի սփյուռս աշխարհի ազգային կյանքի կազմակերպման, առաջընթացի ու վերագարթոնքի տարիներ։

2018 թ., սիրելիներ, դիմավորենք՝ կարեւորելով մեր ժողովրդի ձեռքբերումները, դիմավորենք նաեւ նախանձախնդրությամբ՝ առավել ու առավել ջանքեր բերելու հանուն մեր հայրենիքի շենացման ու զորացման, ազգային մեր իղձերի մարմնավորման։ Որպես Բրիստոսի հավատարիմ ժողովուրդ, որպես պետություն ունեցող ազգ՝ պատասխանատվությամբ, միմյանց հանդեպ սիրով եւ Աստծո օրհնությունը հայցելով մեր գործերին՝ շարունակենք ծառայել պետական, ազգային ու հոգեւոր մեր կյանքի առաջընթացին։ Տարեմուտի այս պահին Նորովի է հնչում առաքելի պատվերը. «Իմաստությամբ վարվեցեք... օգտագործելով ժամանակը» (Կող. Դ 5)։ Մեր կյանքի ժամանակն արժեւորենք՝ իրականացնելով մեր հոգու երազները՝ մեր հայրենիքի փառքի եւ մեր ժողովրդի երջանկության համար։

Սիրելիներ, կիսենք միմյանց հետ տարեմուտի ուրախությունը, զորանանք հույսով ու լավատեսությամբ։ Օգնենք կարոտյալներին, ձեռք մեկնենք միայնակ ու անօգնական մարդկանց, մեր զավակներից բացի՝ խնդություն պարգևենք խնամքի կարոտ երեխաներին։ Սատուս ու գորակից լինենք հայոց բանակին։ Թող ամուր լինի մեր բանակը, հավատքով ամուր՝ մեր ժողովուրդը։ Աղոթում ենք աշխարհի խաղաղության համար։ Խաղաղություն ու բարօրություն ենք մաղթում հայրենի մեր երկրին, Նոր ձեռքբերումներ՝ հայրենի իշխանություններին եւ մեր ժողովրդին՝ ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս։ Թող Աստված՝ պարգևատուն ու առատացնողը ամեն բարիքների, օրհնի մեր երկիրն ու ժողովրդին՝ Սուրբ Ծննդյան շնորհները հեղելով մեր կյանքին։

Շնորհավոր Նոր տարի։

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՏՎԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 6-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ նշվեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնը։ Տոնի առիթով Մայր տաճարում մատուցվեց հայրապետական ու Պատարագ։

Մայր տաճարի զանգերի ավետաբեր դղանջների ներքո խաչվառագարդ թափորը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին Վեհարանից ամպիով անաջնորդեց դեպի տաճար։

Հայրապետական իր օրհնությունը բաշխելով բարեպաշտ ժողովրդին՝ Հայոց Հայրապետը «Հրաշափառի» ներքո մուտք գործեց սուրբ տաճար։ Իջման ու Սեղանի առջեւ կատարված երկրպագությունից հետո Նորին Սրբությունն ուղղվեց դեպի Ավագ խորան, որտեղ սկսվեց հայրապետական ու Պատարագը։

Սրբազան արարողությանը, որպես առընթերակներ, սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Հովհաննէս Հակոբյանն ու Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը։

Հայրապետական Պատարագին այս տարի մասնակցում էին նաեւ տարբեր եկեղեցիներում ծառայող փոքրիկ դպիրներ՝ ի գնահատություն իրենց նվիրյալ սպասավորության։

Ծննդյան ու Պատարագի ընթացքում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը համայն հայությանը փոխանցեց «Բրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» իրշտակաբարբառ ավետիսը՝ տոնի առիթով ամենքին ուղղելով իր հայրապետական պատգամը։



Յանուն Հօր եւ Որդույ եւ Հոգւոյն Սրբոյ. ա-մեն։

«Բրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, Ձեզ եւ մեզ մեծ աւետիս»։

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի հրաշագարդ այս օրը մեր հոգու հայացքները բեթղեհեմյան աստղալույսով ուղղվում են դեպի մուրը, որտեղ Աստծո Միածին Որդին ծնվեց եւ աշխարհ եկավ մեր փրկության համար։ Այսօր համախմբված եկեղեցիներում՝ օրհնաբանում ենք Նորածին Փրկչին, փառավորում երկնավոր Արքային՝ ասելով. «Փառք հրաշափառ ծննդեան Զո, ՏԷ՛ր»։

Ի լրումն ժամանակի՝ Բրիստոս մուտք գործեց աշխարհ։ Փրկչի Սուրբ Ծնունդով մենք մեր հանդեպ աստվածային մեծագույն սիրո եւ խնամքի խորհուրդն ենք տեսնում։ Փրկչի Ծննդյամբ Աստված մարմին զգեցավ, լինելով անսահման՝ կամավորապես հանձն առավ սահմանավորությունը, անչարչարելի խոնարհությամբ ստանձնեց չարչարանքներն ու խաչելությունը, որպեսզի մար-

դիկ արժանանան փրկության շնորհին, դառնան Աստծո որդեգիր զավակները եւ ժառանգեն երկնքի արքայությունը։ Աստվածորդին մարդացավ, ապրեց ու գործեց մարդկանց մեջ՝ վկայելով, որ Աստված իրենց երկնավոր Հայրն է, Ով մարդկության հանդեպ Իր սերը, խնամքն ու հոգատարությունը արտահայտում է աներեւակայելի զոհողությամբ, ինչպես հավաստում է Հիսուսի սիրելի աշակերտ Հովհաննէսը. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. Գ 16)։

Սիրելիներ, Աստծուն հակառակ ընթացքները, սակայն, շարունակում են ալեկոծել մարդկության կյանքը, ծանրաբեռնել հոգսերով ու մտահոգություններով։ Գիտական ու տեխնոլոգիական հսկայական առաջընթացով հանդերձ՝ մարդկությունը երբեք չէ բարձր եւ չարի, կյանքի եւ մահվան ընտրության առջեւ։ Տնտեսական աննախընթաց զարգացումների մեր դարում միլիոնավոր մարդիկ տակավին գտնվում են սովի ու աղքատության մեջ։

Շարունակությունը՝ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



Սկիզբը՝ էջ 1

Մարդու իրավունքների պաշտպանության այս ժամանակաշրջանում խախտվում են ժողովուրդների եւ մարդկանց իրավունքները: Երկ-խոսությունների մեր օրերում բազում մարդիկ դառնում են զոհ անհանդուրժողականության, կրոնական ատելության, ահաբեկչության, ենթարկվում տարատեսակ բռնությունների: Հանուն խաղաղության

փյուռ ժողովրդի կյանքը: Հայրենիքում մեր ժողովուրդը շրջափակման մեջ է անկայուն խաղաղության պայմաններում մաքառում է բարո-րություն կերտելու եւ իր իրավունք-ները պաշտպանելու համար՝ իր զավակների կյանքի թանկ գնով ապահովելով մեր երկրի անվտանգությունը: Մեր ժողովրդի աննկուն կամքով ու նվիրումով արձանագր-ված ձեռքբերումներով հանդերձ՝



պայքարի այս ժամանակներում բյուրավոր մարդիկ կյանքի գին են վճարում զենքի գործադրմանը եւ սպառնալիքների մրցավազքին: Հասարակությունների եւ ընտանիք-ների համար չարիք են դառնում թմ-րադեղերի տարածումը, ալկոհոլի չարաշահումը եւ այլ մոլուցքներ, ո-րոնց տրվելով՝ մարդիկ անկարող են դառնում սեփական կյանքը կազմակերպելու, իսկ ոմանք, ծայրահեղ հուսահատության մեջ, դիմում ինք-նասպանության:

Աշխարհի խաղաղ ընթացքը խա-թարող փորձությունները հուզում են նաեւ մեր երկրի ու աշխարհաս-

մեր երկրի առջեւ տակավին ծառա-ցած են գործադրության, աղքա-տության խնդիրները, շարունակա-կան ջանքեր են պահանջվում ամ-րապնդելու վստահությունը վաղվա օրվա հանդեպ, հավատը՝ արդա-րության նկատմամբ, հաղթահարե-լու սոցիալական, տնտեսական եւ հայրենական ու ազգային կյանքում առկա այլ մարտահրավերները:

Միտելենք, աղքատիկ մտւում, նեղությունների մեջ ծնվեց մեր Տերը, որպեսզի մենք Նրան ապավինու-թյամբ նեղություններն ու դժվարու-թյունները հաղթահարենք: Մեծահա-րուստ մոգերից պատվվեց, որպեսզի



ունենորներն իրենց ունեցվածքը բա-րի ու աստվածահաճո գործերի ծա-ռայեցնեն: Հովիվներից երկրպագ-վեց, որպեսզի բոլոր մարդիկ պար-գասրտությամբ Տիրոջ առաջ խո-նարիվեն եւ Նրա բերած շնորհներին արժանի դառնան: Քրիստոսի մար-դեղությամբ վկայված Աստծո մշտա-կան հոգատարությունը մեր հանդեպ վայելում ենք, երբ մեր հավատքը կյանք է ու գործ, երբ Փրկչի Սուրբ Ծնունդը չի դառնում միայն պատմու-թյուն ու հիշատակություն, միայն տոնախմբություն կամ խրախճանք, այլ՝ ապրում, ներշնչանք, մեծագույն խորհուրդ: Այս ընկալումով Սուրբ Ծննդյան տոնակատարումը, մեր ա-ղոթներն ու հայցը շնորհների անս-պառ աղբյուր են բացում մեր առջեւ, բերում բերկրանքը երկնավորների հետ առ Աստված փառաբանության, կյանքը լցնում աստվածային ներկա-յությամբ, ընտանիքները՝ երկնային սիրով ու շնորհներով, աշխարհն ու մարդկությունը՝ հրեշտակների ավե-տած խաղաղությամբ ու հաճու-թյամբ:

Միտելի՝ բարեպաշտ հավատա-ցյալներ, Աստծո երկնառաք պար-գեւներով լեցուն այս օրը Հայրապե-տիս մաղթանքն ու պատգամն է, որ Քրիստոսի Ծննդյամբ սկսված Նոր արարչության մեջ լինենք մեղքերից թողափված Նոր արարածներ: Մա-նուկ Հիսուսին ընդունելով մեր սր-տերում՝ ամուր պահենք մեր հա-վատքը, բարեպաշտ ընթացքը, որ-պեսզի միշտ կարողանանք վայելել Աստծո հոգածությունն ու անսահ-ման սերը: Քրիստոսի պատվիրան-ների իմացությունն ու կատարումը, սրտի մաքրությունը, հոգու խոնար-հությունը, եղբայրսիրությունն ու ո-ղորմությունը այն կարեւոր ընծա-ներն են, որոնք այսօր Աստված ու-րախությամբ պիտի ընդունի մոգե-րի բերած ոսկու, կնդրուկի եւ զմուռ-սի փոխարեն՝ որպես հաճելի նվեր-ներ մանուկ Հիսուսին: Այս ոգով ու հավատով է նաեւ, որ իրապես օգ-տակարություն կբերենք հայրենի մեր երկրին, կարիքի մեջ գտնվող մեր եղբայրներին ու քույրերին, կկարողանանք անվեհեր պաշտ-պանել հայրենիքի սահմանները, զորացնել քրիստոսապաշտ մեր ժո-ղովրդի միասնականությունը ու նպաստել ազգային մեր իղձերի ի-րականացմանը, մեր ժողովրդի ար-դար իրավունքների հաղթանակին:

Այս մաղթանքով Մեր ողջույն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եկե-ղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկո-սին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքե-պիսկոպոս Մանուկյանին, Կոս-տանդուպոլսի Հայոց Պատրիարք-ական Տեղապահ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեկյա-նին, մեր Սուրբ Եկեղեցու հոգեւոր դասին: Սուրբ Ծննդյան բերկրալի ա-վետիսով Մեր ողջույն ենք բերում քույր Եկեղեցիների հոգեւոր Պետե-րին: Հայրապետական օրհնությամբ ողջունում ենք եւ մեր բարեմաղ-թանքներն ենք բերում Սրբազան Պատարագի արարողությանը ներ-կա Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին, ՀՀ



առաջին տիկնոջը, ողջույն ենք հղում Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Սերժ Սարգսյա-նին եւ Արցախի Հանրապետության Նախագահ տիար Բակո Սահակյա-նին, հայոց պետական ավագանուն, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելություն-ների ներկայացուցիչներին: Հայրա-պետական Մեր սերը, օրհնությունն ու բարեմաղթանքները՝ համայն հա-վատավոր Մեր ժողովրդին:

Աղոթում ենք առ մեր Տերը Հիսուս Քրիստոս, որ Իր հրաշափառ Ծնն-դյան շնորհները սփռվեն ողջ աշ-խարհում, ժողովուրդներն ընթանան խաղաղության ու համերաշխության

ղությունից հետո Գարեգին Բ Հայրա-պետն ընթերցեց սբ Բարսեղ Կեսա-րացու Ջրօրհնյաց աղոթքը: Այնուհե-տե ԲՀ ՉՈԲ հոգեւոր առաջնորդ Վր-թանես եպս Աբրահամյանը սրբա-լույս Մյուռնուր Մկրտության ավագա-նից բարձրացրեց ս. Խորան եւ մա-տուցեց Վեհափառ Հայրապետին: Ս. Մյուռնուրն ու խաչով ջուրը օրհնելուց հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր տաճարի Ջրօրհնյաց խաչը փոխանցեց խաչի կնքահորը:

Սուրբ Պատարագի եւ Ջրօրհնեցի արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Արա Բաբոյանը, ՀՀ ա-ռաջին տիկին Ռիտա Սարգսյանը, ԱԺ պատգամավորներ եւ ՀՀ կառա-



Սուրբ Ծննդյան հրեշտակաձայն պատգամի համաձայն, եւ անվրդով խաղաղություն տիրի մեր հայրենի-քում, շինություն, բարօրություն՝ աշ-խարհասփյուռ ազգիս կյանքում: Թող մեր հայրենակներ ու ազգան-վեր գործերի բարի արդյունքներով հզորանա մեր հայրենիքը, պայծառ մնա մեր Սուրբ Եկեղեցին, եւ մենք արժանի լինենք Տիրոջ կողմից մեզ տրված փրկության ու հավիտենա-կան կյանքի պարգեւին՝ այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

**Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Չեզ եւ մեզ մեծ աւետիս:**

Ս. Պատարագի ավարտին, հան-դիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Ջրօրհ-նեցի արարողությունը: Այս տարի Մայր տաճարի Ջրօրհնեցի արար-ողության խաչի կնքահայրն էր ՀՀ պաշտպանության նախարար Վի-գեն Սարգսյանը:

Սուրբգրային ընթերցումներից եւ Ջրօրհնյաց շարականների երգեցո-

վարության անդամներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ, Գե-րագույն հոգեւոր խորհրդի անդա-մներ, Հայ Եկեղեցու բարերարներ, Հայաստանում հավատարմագր-ված օտարերկրյա դիվանագիտա-կան առաքելությունների ներկայա-ցուցիչներ, հասարակական գոր-ծիչներ, կրթական, գիտական եւ մշակութային հաստատություննե-րի ներկայացուցիչներ:

Արարողության ավարտին Ամե-նայն Հայոց Կաթողիկոսը, իր օրհնու-թյունը բաշխելով Մայր տաճարի շր-ջափակում համախմբված ժողովր-դին, թափորով ուղղվեց դեպի Մայր Աթոռի «Ալեք եւ Մարի Մանուկյան» գանձատուն, ուր տեղի ունեցավ ըն-դունելություն: Նորին Սրբությունն ընդունելության մասնակիցներին վերստին ուղղեց իր բարեմաղթանք-ները՝ Տիրոջ Սուրբ Ծննդյան եւ Աստ-վածհայտնության հուսառատ տոնի առիթով՝ աղոթելով հայրենի երկրի խաղաղության ու առաջընթացի եւ աշխարհասփյուռ հայ ժողովրդի բա-րօրության համար:

Նոր ԱՇԽԱՏԱԿՈՒՄ


Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Դերենիկ արք. Սահակյանը ծառայության է կոչվել Ե-գիպտոսի հայոց թեմում՝ թեմակալ առաջնորդի իշ-խանության ներքո:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Հունվարի 9-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրա-գույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայ-րապետական այցով մեկնեց Ամերիկայի Միացյալ Նա-հանգներ:

Միացյալ Նահանգներում Նորին Սրբությունը հանդի-պումներ կունենա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարների հետ՝ ընկարկելու Մայր Աթոռի կողմից իրականացվող զա-նազան ծրագրեր:

ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷԶՄԻԱՍՏՆՈՒՄ



Հունվարի 5-ին՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Զրիստոսի Ա. Շննդյան եւ Աստվածհայտնության բերկրալի տոնի նախատոնակի առիթով, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր տաճարում մատուցվեց ճրագալույցի Պատարագ:

Պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս հաչատուրյանը: Մինչ ս. Պատարագի սկսվելը կատարվեց Երեկոյան ժամերգություն, այնուհետեւ ընթերցվեցին

թյան պատմությունը, իրադարձություն, որ ջերմացրեց սառած հոգիները, փշրեց քարացած սրտերը եւ բացեց հորիզոնը ապագայի՝ հույսով լուսավորված ապագայի:

Այսօր մենք դառնում ենք հովիվներ, որ փառաբանում են Փրկչին, դառնում ենք Արեւելքից ճամփորդած իմաստուններ, որ երկրպագում են ու ընծաներ մատուցում մանուկ Հիսուսին: Այսօր մենք հաղորդակցվում ենք Աստծո մարդեղության՝ զոհաբերության մեծագույն խորհրդին:



սուրբգրային տարբեր հատվածներ, որից հետո Մայր Աթոռի չորս միաբան սարկաված ընթերցեցին Դանիելի մարգարեությունը:

Ս. Պատարագի ընթացքում Արշակ սրբազանն իր քարոզում անդրադարձավ Ս. Շննդյան խորհրդին: «Փրկչի Ա. Շննդը մի իրադարձություն է, որ հեղաշրջեց մարդկու-

նության համար սկսվում է ոչ թե Գողգոթայից, այլ Ա. Շննդից: Երեւակայությունն անգամ անգոր է Աստծո մարդեղության հրաշքի առջեւ: Աստված, որ աներեւույթ է, դառնում է երեւելի: Աստված, որ անսահման է, դառնում է սահմանավոր: Տիեզերքը տեղավորվել է հյու-

լեի մեջ, ծառը ամփոփվել՝ պտղի պատյանում: Մի՞թե հրաշք չէ սա, մի՞թե կա ավելի մեծ զոհաբերություն, քան մեծությունից կամավորապես փոքրանալը, բարձրությունից խոնարհվելը:

Մարդիկ միտք ու հոգի են մաշում, գիշերը ցերեկին խառնում՝ վեր բարձրանալու, մեծության հասնելու, հասարակական դիրք ու ծառայողական առաջընթաց ունենալու համար, մինչդեռ Աստված աներեւակայելի էր բարձրությունից խոնարհվում է ու մարդկային մարմին զգենում: Շատերի համար անհասկանալի է Զրիստոսի զոհաբերության խորհուրդը: Մարդ, որ հնարամտության ու հաջողվածության արդյունք է համարում ուրիշին զոհելը, նվաճելը, զավթելը, կուտակելը, չի կարող հասկանալ զոհվելու, նվիրվելու եւ բաժանելու արժեքը»,- նշեց Արշակ սրբազանը:

Այնուհետեւ սրբազան հայրը, խոսելով մարդու հանդեպ Աստծո դրսեւորած սիրո մասին, ընդգծեց, որ մարդկանց հանդեպ անսահման սերն է, որ Աստծուն դարձրեց մարդ, երկնքից իջեցրեց երկիր, բարձրությունից խոնարհեցրեց, մեծությունից փոքրացրեց: «Սերն առանց զոհաբերության, միեւնույնն է, թե առնեն առանց ջերմության: Չոհաբերությունը սիրո բովանդակությունն է, իմաստն ու ամբողջությունը: Մի՞թե Աստծուն, սիրելի հայրենիքը, սիրելի ընտանիքը կամ բարեկամին՝ առանց պատրաստ լինելու զոհվել նրանց համար, նշանակում է դատարկախոսությունը դարձնել մասնագիտություն, նշանակում է խոսել, անվերջ խոսել սիրո մասին, բայց չսիրել: Մի՞թե նշանակում է նվիրվել, սիրել նշանակում է զոհվել, զոհվել, զիջել, չբարկանալ ու չնախանձել: Մի՞թե այնպես, ինչպես Զրիստոս սիրեց, սիրել անմնացորդ ու անպայմանավոր: Աստված չսիրեց մարդկանց նրա համար, որ նրանք կատարյալ էին ու զերծ թերություններից, այլ նրա համար, որ այդ սերը փրկություն դառնա նրանց համար եւ ազդու պատգամ սթափության եւ զգոնության՝ հրաժարվելու անօրինություններից ու ապականություններից: Մի՞թե, որ մարդիկ էր օրինակով ձգտեն բարուն, լուսավորին, ձգտեն սրբու-



թյանն ու անապականությանը»,- ասաց Արշակ եպիսկոպոսը՝ հավելելով, որ մարդկության առջեւ ծառացած խնդիրներն ու մարտահրավերները՝ թշվառությունը, աղքատությունը, գաղթականությունը, պատերազմները, ահաբեկչությունը, ծագել են սիրո ու զոհաբերության ոգու պակասից:

Դիմելով ներկա հավատացյալ ժողովրդին՝ պատարագիչ սրբազանը հորդորեց հետեւել Տիրոջ օրինակին, ուժ առնել աստվածային Նրա սիրուց: «Մենք մի ժողովուրդ ենք, որ դարերով վկայել ենք մեր սերը Աստծո եւ մարդկանց նկատմամբ, նախընտրել ենք զոհվել, քան թե զոհել, նվիրվել, քան թե նվեր ստանալ, եւ դա մեզ երբեք չի տկարացրել, այլ ընդհակառակը՝ դարձել է մեր գոյատեւման գրավականն ու երաշխիքը: Մեր սիրո մեջ երբեք կեղծիք խառնված չի եղել, այլ այն շա-

ղախված է եղել զոհաբերությամբ, խնամատարությամբ ու սրտակցությամբ: Մեր երջակությունը մենք գտել ենք զոհաբերության ու նվիրաբերության մեջ»,- ասաց նա:

Ս. Պատարագի ավարտին Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը, բարձրանալով Ավագ խորան, վառեց Հիսուս Զրիստոսին խորհրդանշող մոմը, որպեսզի կենսատու լույսը բաշխվի Մայր տաճարում գտնվող հարյուրավոր հավատացյալներին:

Պատարագի արարողությունից հետո հոգեւորականների թափորը Մայր տաճարից ուղղվեց դեպի Հին Վեհարան, ուր կատարվեց Ա. Շննդյան առաջին տնօրինեցի արարողությունը:

Պատարագին ներկա էին տոնի առիթով տարբեր երկրներից Հայաստան ժամանած Մայր Աթոռի բարերար հայորդիները:



Ամենայն հայոց Կաթողիկոսն այցելեց Ռ. Յուլյանի արյունաբանական կենտրոնում բուժվող մանուկներին

Հունվարի 5-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Ռ. Յուլյանի անվան արյունաբանական կենտրոն՝ Ա. Շննդյան տոնի առիթով իր շնորհավորանքներն ու օրհնությունը բերելու կենտրոնում բուժվող մանուկներին:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Երեւանի Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր սպասավոր Առնակ քնն. Հարությունյանը:

Պյանը եւ կենտրոնի այցելու հովիվ, Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր սպասավոր Առնակ քնն. Հարությունյանը:

Ամենայն Հայոց Հայրապետին մուտքի մոտ դիմավորեցին կենտրոնի տնօրեն ք. գ. դ., պրոֆեսոր Սմբատ Դադբաշյանը եւ կենտրոնի ղեկավար կազմը: Նորին Սրբությունը պրոֆեսոր Ա. Դադբաշյանի

ուղեկցությամբ շրջայց կատարեց արյունաբանական կենտրոնում, ծանոթացավ կենտրոնի պայմաններին եւ արդիական սարքավորումներով հագեցվածությանը:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետն այցելեց մանկական խաղաքենյակում հավաքված մանուկներին եւ նրանց ծնողներին՝ շնորհավորելով Նոր տարվա եւ մեր Տիրոջ Ա. Շննդյան հուսանորոգ տոների առիթով: Գարեգին Բ Կաթողիկոսը, խոսելով Ա. Շննդյան խորհրդի մասին, ընդգծեց, որ Աստված էր սերը եւ առատ շնորհները բոլորին է բաշխում՝ ըստ իրենց կարիքների՝ պայծառակերպելով ամենքի կյանքը: Վեհափառը հորորդեց փոքրիկներին այդ հավատով ու հույսով լցվել եւ մարդեց վերադառնալ իրենց բնականոն կյանքին՝ շուտափույթ ապաքինվելով:

Այցի առիթով կենտրոնի տնօրենն իր հերթին շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ կարեւորելով եկեղեցու եւ կենտրոնի միջեւ ձեւավորված գործակցությունը եւ պարբերաբար ցուցաբերվող աջակցությունը: Պրոֆեսոր Ա. Դադբաշյանն ընդգծեց այցե-



լող հոգեւորականների օգտակար ծառայությունը եւ բարերար ազդեցությունը կենտրոնում բուժում ստացող մանուկների կյանքի վրա:

Վերջում Գարեգին Բ Կաթողիկոսը գրույց ունեցավ բժիշկների հետ: Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց նրանց նվիրյալ ծառայությունը եւ շնորհակալություն հայտնեց մանուկների նկատմամբ ցուցաբերվող հոգատարության համար: Նո-

րին Սրբությունը կենտրոնի տնօրինությանը եւ բժշկական անձնակազմին մաղթեց Աստծո գորակցությունն իրենց դժվարին առաքելության մեջ:

Տոնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը մանուկներին ընծայեց խաչեր, Մանկական Աստվածաշնչեր եւ այլ նվերներ՝ Մայր Աթոռի կողմից նյութական աջակցություն ցուցաբերելով նաեւ նրանց ընտանիքներին:



Իմ աչքերը ես լույսին բացեցի՝ 1908 թվի սեպտեմբերի 20-ին Բուխարեստում, որ ռումիններեն նշանակում է «ուրախությունների քաղաք»։ Երեսուհինգ տարի անց Ակրոպոլիս ստորոտում՝ մի խղճով հայ աղոթքի տան մեջ, իմ հոգին բացեցի մի այլ լույսի դիմաց, որի ճանապարհով փորձեցի գտնել աղբյուրը անձանոթ լույսի։ Եվ Աստծուն փնտրելու ճանապարհին ես գտա Սուրբ Էջմիածինը և իմ Մայր Հայրենիքը ու խոնարհվեցի ճակատագրի առաջ՝ դառնալով առաջին սպասավորը մեր լուսաբնակ հայրենի Եկեղեցու։

Վազգեն Առաջին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվ, գործ 415



1984-ին՝ Գեորգյան հոգեւոր ճեմարանում ամանորյա հանդիսության ժամանակ, գրաբարի դասախոս Պետրոս Բեդիրյանը ոգեւորությանը նկատում է, որ այդ պահին «գուցե օրինյալ ընտանիքներում, օրինյալ օրորոցներում ծնվեցին մանուկներ, որոնք, ով գիտե, ազգի ապագան եւ կարկառուն դեմքերն են լինելու, ինչպես 75 տարի առաջ Պալմյանների օրինյալ ընտանիքում ծնվեց նա, որի ծնողները դեռ չգիտեին, թե ինչ են պարգևում ազգին։ Բայց, այնուամենայնիվ, այդ պարգևը բոլորի կողմից ընդունված պարգև եղավ» (Էջմիածին, հունվար, 1984, էջ 18, «Ամանորը Մայր Աթոռում» հոդվածից)։

Ճշմարիտ է ասված, թե ծնունդներ կան, որոնք պարգև են, մխիթարություն՝ ցավի տատանկոտ ճանապարհն անցնող անթվարկելի կորուստներ ունեցած ազգի կյանքում։ Այդպիսի ավետաբեր ծնունդ էր նաեւ 1908-ի սեպտեմբերի 20-ին

Լեւոն-Կարապետ Պալմյանի կյանքն ու հասարակական գործունեությունը Ռումինիայի հայկական գաղթօջախում

Նվիրվում է Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ծննդյան 110-ամյակին

հեռավոր Ռումինիայի Բուխարեստ քաղաքում Կարապետ Պալմյանի (հետագայում՝ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս, Ն. Ս. Ս. Ս. Վազգեն Առաջին) ծնունդը։

Դեռեւս 1894-96 թթ. սկսված համիդյան առաջին կոտորածներից հետո Կ. Պոլսից ու դրա մերձակա շրջաններից հայրուրավոր հայ ընտանիքներ բռնեցին աշխարհասփյուռ գաղթի ճանապարհը։ Նրանցից ոմանց համար հանգրվան դարձավ հեռավոր Ռումինիայի Բուխարեստ քաղաքը։ Հենց այստեղ գաղթական երկու հայի՝ Աբրահամ Պալմյանի եւ Սիրանույշ Գալստյանի ամուսնական միությունը փառավորվեց մանկան ծննդով, որը լինելու էր ծնողների միակ գավակի ավետաբեր ծննդյան ազդարարը, իսկ հետագայում վերածվելու էր հոգեւոր Հայաստանի կերտման համակազմակերպչի հարկի սուղ պայմաններում ապրող Աբրահամ Պալմյանի առաջնեկը՝ Կարապետը, որին ծննդյան երրորդ օրն իսկ մկրտության ավագանի մոտ Հարություն քահանա Սարգսյանը նվիրում է Նոր անուն՝ Լեւոն։

Լեւոն-Կարապետի հայրը՝ Աբրահամ Պալմյանը, կոշկակար էր։ Այս մասնագիտությանն էին տիրապետում նաեւ նրա եղբայրները՝ Հակոբը, Գրիգորը, Հովհաննեսը։

Մայրը՝ Սիրանույշ Պալմյանը, աղբյուրանկալիքի ուսուցչուհի էր, որը մինչ արտագաղթն ու ամուսնությունը՝ դեռ 1907-ին, Մաղաքիա Օրմանյանի օրոք ստանալով Պոլսի Պատրիարքարանից ուսուցչության վկայական՝ դասավանդել էր Ռոդոստոյի հայոց Նախակրթական վարժարանում։ Օտարության ամենակուլ փորձությանը դիմանալու համար նա իր վրա է վերցնում գավակի մեջ դեռ վաղ մանկությունից հայրենի երկրի պատմության, լեզվի ու մշակույթի նկատմամբ սիրո սերմանումը։ «Սիրանույշ Պալմյան եղած էր

իր որդույն խիստ քննադատը, ուղղելու անոր քայլերը դեպի մարդկային ըմբռնումի ազնուագոյն զգացումներուն՝ սեր հանդէպ մարդկության, չինայելու ոչ մէկ ճիգ իր նմանը հասկնալու։ Ամենայն հայոց հայրապետը իր մօր՝ Տիրամայր Սիրանույշ Պալմյանին կը պարտի իր կրօնա-բարոյական կրթութիւնն ու բարեպաշտութիւնը։ Մօրը կը պարտի հանրութեան եւ հայութեան օգտին անսակարկ զոհուելու եւ անձն-իրաքար ծառայելու զգացումը», - գրում է Հ. Գալստյանը (Գալստյան Յ., Ռումինահայ գաղութը, Տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1979, էջ 128)։

Սիրանույշ Պալմյանը ռումինահայ գաղթօջախում գտնում է իր անելիքը ոչ միայն մանկավարժության ասպարեզում։

Անդրադառնալով ռումինահայ գաղութում Սիրանույշ Պալմյանի բազմածավալ գործունեությանը՝ Ս. Գրիգորյանը նորովի է բացահայտում նրա կերպարը։ Վավերագրում կարդում ենք նրա լրագրային, ինչպես նաեւ հասարակական-կամավորական գործունեության մասին։ «1914-16 թթ. իբրեւ Պուրբէշի Հայ Կարմիր Խաչի Վարչութեան անդամ՝ սատարած է հայ կամավորականներու օգնութեան գործին։ Աշխատակցած նաեւ Հ. Ս. Պոտուրիանի «Երկիր» թերթին, գրած է Հնչակեան 20 կախաղաններու եւ այլ նիւթերու շուրջ» (Գրիգորյան Ս., Երջանկայիշատակ Ամենայն հայոց կաթողիկոս Ն. Ս. Ս. Վազգեն Ա.ի կեանքն ու գործը, հանգիստը եւ յուղարկաւորութիւնը, Լոս Անճելէս, 1996 թ., էջ 9)։

Այսուամենայնիվ, Սիրանույշ Պալմյանն առաջին հերթին մայր էր, ով, նախեւառաջ, մայրական տեսանկյունից էր արձագանքում հյուրընկալ երկրում տեղի ունեցող փոփոխություններին՝ միամորիկ երեխայի կյանքի անվտանգության նկատառումներից ելնելով։

Բալկանյան երկրորդ պատերազմի գոյժը ցնցում է երիտասարդ ընտանիքին։ Որպես «առաջին ճամփորդության» ուղղություն՝ փոքրիկի համար ծնողներն ընտրում են իրենց ծննդավայրը՝ Ռոդոստոն, որ գտնվում էր

Թուրքիայում։ Իրականում նպատակը մեկն էր, պատերազմող Ռումինիայի սահմաններից հեռու տանել զավակին։ Ծնողների ծննդավայրում լինելու առաջին ու բացառիկ հնարավորությունը Լեւոն-Կարապետի համար ընձեռվում է 1913-ին, երբ մոր հետ ուղեւորվում է Պոլիս, իսկ այնուհետեւ՝ Ռոդոստո՝ հարազատների տեսության։ Գրեթե երեք ամիս տեւած ճանապարհորդության ընթացքը երեխայի համար նպատակային ու դաստիարակչական դարձնելու համար մայրը փոքրիկին տանում է «Կետիկ փաշա» թաղամասում գտնվող «Սուրբ Մերոպյան» ազգային հայկական ծաղկոցը (Սըվապլյան Հակոբ, Ամենայն Հայոց Հայրապետ Ն. Ս. Ս. Ս. Վազգեն Ա Կաթողիկոս եւ իր Թուրքիա այցելությունը, Պոլիս, 1961 թ., էջ 5)։

Բալկանյան պատերազմի զինադադարից հետո նրանք վերադառնում են Բուխարեստ։

Կարճ ժամանակ անց սկսվում է Առաջին աշխարհամարտը։

1914-16 թթ. Ռումինիան դարձյալ հայտնվում է պատերազմի թատերաբեմում՝ միանալով «Անտանտա»-ի կազմում գտնվող Գերմանիային եւ Ավստրո-Հունգարիային՝ ընդդէմ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Բելգիայի, Սերբիայի եւ Հռենոզորիայի կազմած դաշինքի։

Զուգընթաց՝ Էնվեր փաշայի թելադրանքով գերմանական զորքերի իրամասնատար Ֆոն Մաքենզեն հայաիւլած քաղաքականությունը շարունակում էր նաեւ Ռումինիայում ապաստանած հայերի նկատմամբ։

Ռումինիայում արդեն բնակություն հաստատած հայերի մեծ մասը կրկին բռնում է գաղթի ճանապարհը։ Գաղթականների մեջ էին նաեւ Պալմյանները։ Ամուսինները որոշում են նոր եզերքում փնտրել անվտանգ ապաստան իրենց փոքրիկի համար՝ առանց կռահելու, որ կամոքն Աստծո փայփայում ու գուրգուրում են, անվտանգ ու անվաստ են դարձնում նաեւ մի ողջ ժողովրդի հոգեւոր վերագարթոնքի Հույսը։

Այս անգամ ապահով հանգրվան է դառնում Ռուսաստանի Օդեսա քաղաքը։



Պատմական հանգամանքների պատճառով ութնամյա մանուկը գրկվում է ժամանակին դպրոցում կրթություն ստանալու հնարավորությունից։ Ինչ ընթացք կստանար գաղթականների հետագա կյանքը, հայտնի չէ։ Այդ պատճառով առաջադեմ մտավորական, գրող Արմեն Շիտանյանի ջանքերով այժմ էլ հայկական վարժարան է բացվում Օդեսայում՝ ռուսական դպրոցի շենքում, որի ուսուցչական կազմում էր նաեւ Սիրանույշ Պալմյանը։ Վերջինս շուրջ երկուսուկես տարի դասավանդում է Օդեսայի հայկական վարժարանում։ Փոքրիկ Լեւոն-Կարապետն սկսում է իր նախակրթական դասընթացները նախեւառաջ մոր հետ, իսկ այնուհետեւ ծնողները, ունեցած նյութական մեծ դժվարություններն անտեսելով, մասնավոր դասերի են ուղարկում հեղինակավոր ուսուցիչ Աշոտ Սպանդարյանի մոտ (Վազգեն Ա Հայրապետ Հայոց, Կենսագրություններ, կոնդակներ, քարոզներ, Էջմիածին, 1958, էջ 10)։

Շարունակելի

Լուսինե ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մանկավարժական գիտ. թեկնածու

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց Մայր Աթոռի պաշտոնեւորներին



Հունվարի 8-ին Ն. Ս. Ս. Ս. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում Ամանորի եւ Ս. Ծննդյան տոների առիթով հանդիպում ունեցավ Մայր Աթոռի տարբեր բաժիններում աշխատող պաշտոնեւորներին հետ։ Տերուհանյան աղոթքից հետո Մուշեղ եպս Բաբա-

յանը ներկաների անունից շնորհավորեց Նորին Սրբությանը՝ բերկրաւի տոների առիթով, եւ վստահեցրեց, որ Մայր Աթոռի պաշտոնեւորները պիտի շարունակի լծակից լինել Հայոց Հայրապետին՝ ազգանպաստ եւ եկեղեցաշէն ծրագրերի իրականացման գործում։

Պաշտոնեւորյան անունից Վեհափառ Հայրապետին շնորհավորա-

կան խոսք ուղղեց նաեւ Մայր Աթոռի համակարգչային եւ ինժեներատեխնիկական սպասարկման բաժնի տնօրէն տիար Սմբատ Մարգարյանը։

Այնուհետեւ Ամանորի եւ Ս. Ծննդյան տոների առիթով ներկաներին շնորհավորեց եւ իր հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց Գաբրիել Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Նորին Սրբությունը, ուրախություն հայտնելով այս հանդիպման առիթով, իր շնորհակալությունն ու զնախադանքը հայտնեց Մայր Աթոռի աշխատակազմին՝ այն աշխատանքի համար, որ իրականացվում է սիրով, նվիրումով ու նախանձախնդրությամբ։

Գաբրիել Բ Վեհափառն անդրադարձ կատարեց առաջիկա ծրագրերին, խոսեց մասնավորապես տարվա ընթացքում տոնախմբվելիք հոբելյաններին՝ Հայաստանի առաջին Հանրապետության եւ մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված տոնակատարու-



թյուններին եւ նախատեսվող միջոցառումներին Մայր Աթոռի կարեւոր մասնակցության մասին։ Նորին Սրբությունը խոսեց նաեւ 2018 թվականը Երիտասարդության տարի հռչակելու եւ այդ առիթով Սփյուռքի թեմերից դեպի Հայաստան ծրագրվող բազմաթիվ երիտասարդական ուխտագնացությունների եւ այլ միջոցառումների մասին։

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Հայրապետը Մայր Աթոռի աշխատակիցներին մաղթեց քաջամողջություն եւ ընտանեկան երջանկություն՝ հայցելով Երկնավորի օրհնությունն ու շնորհները նրանց օջախներում, որպեսզի ուրախություն գգացնումով կարողանան իրենց ամբողջանվեր ծառայությունը բերել Սուրբ Եկեղեցուն։

Սկիզբը՝ 2017-ի թիվ 20, 22-24

4.

Հանճարեղ բանաստեղծի գրեթե պատանության շրջանում սկզբնավորված չարենցագիտությունն ունեցել է զարգացման հետաքրքիր ընթացք՝ գրախոսություններից ու հոդվածներից սկսած՝ մինչև ծանրակշիռ մենագրություններ: Իր ողջության օրոք նա գրական անկեղծ բարեկամների կողքին ունեցել է նաեւ ստոր ու փոքրոգի թշնամիներ, իրենց չափը չճանաչած, գրական գրագիտությունից զուրկ, նախանձից կուրացած հացկատակներ:

Բայց որքան էլ խոհեմ ու հեռա-տես էին մեր գրականության ապագայով մտահոգ, Չարենցի իրական արժեքը հասկացող, մեր գրականության զարգացման նորագույն փուլում նրա անփոխարինելի դերն ըմբռնող ու նրան պաշտպանող ազնիվ գրական մարդիկ՝ Ն. Աղբալյանը, Յ. Սուրխաթյանը, Պ. Մակինցյանը, Ս. Հակոբյանը, որոնք, չարենցագիտության հիմնադիրները լինելով, 1919-30-ական թթ. բարդ մթնոլորտում կարողացան զարգացման ու հասունացման ընթացքի մեջ գնահատել եւ ուղղորդել դարի հանճարին, այնուամենայնիվ, անհավասար պայքարում ժամանակավոր հաղթանակ տարան պետականորեն հովանավորվող այն չարամիտները, ովքեր այսօր հիշվում են գերազանցապես Չարենցի անվան հետ՝ իրենց այս կամ այն տմարդի արարքով կապված լինելու հանգամանքով: Ժամանակն էր այդ չարամիտներին խրախուսողը, նրանց ստոր հաղթանակների շարժիչ ուժը, իսկ Չարենցի բարեկամներն ու

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ ԵՎ ՎԱՀԱՆ ՆԱԿԱՍԱՐԴՅԱՆ. ՄԻ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

պաշտպանները նույն այդ ժամանակներում արժանանում էին դաժան պատիժների ու հալածանքների: Դարի այդ մեծ ողբերգությունն ապրած Ե. Չարենցը 1930-ական թթ. արյունալի իրականության առաջին զանգահարն էր, որի հատկապես վերջին տարիների ստեղծագործություններում տեսնում ենք այդ ողբերգության հզոր արձագանքը: Չարենցյան այդ գործերը բնականաբար չէին տպագրվելու ժամանակին, եւ նրանց նույնպես վիճակված էր անհայտ ճակատագիր: Դրանց մի մասը պիտի ոչնչանար տգիտության չարամիտ ասպետների սեւ ձեռքով, մի մասը պիտի հայտնվեր իրենց Չարենցի բարեկամ հռչակած մասնավոր մարդկանց արխիվներում ու հետո՝ վերջին ժամանակներում, դառնար խայտառակ աճուրդի առարկա, մի մասը Չարենցի բարեկամները պիտի տասնյոթ տարի հողի տակ թաղեին՝ փրկելու ազնիվ մղումով, բայց հենց այդպիսով դրանց զգալի մասը փտեցնելով ու քայքայելով... Հասկանալի է, որ այդ ձեռագիր ստեղծագործությունների մասին, որ հիմնականում հայտնի դարձան 1960-ական թթ. հետո, Վ. Նավասարդյանը կարող էր ենթադրել, բայց տեղյակ ու հարգողակից լինել չէր կարող: Այլապես դրանք գոնե կվակայակոչվեին նրա գրքում: Վ. Նավասարդյանը ծանոթ էր Չարենցի տպագրված

գործերին միայն, հոկտեմբերը եւ նրա ղեկավարին փառաբանող ստեղծագործություններին, այն երկերին, որոնք բուռն ոգեւորությամբ փառաբանում էին զառանգական համաշխարհային հեղափոխությունը եւ աշխարհի բոլոր ճորտերի համար խոստանում «ըզձյալ այգաբաց»: Իսկ «Երկիր Նաիրի» պոեմանման բազմաշերտ վեպի գաղտնագրերն էլ դեռեւս բացահայտված չէին: Սակայն Վ. Նավասարդյանը, ցավոք, չէր կարող ճանաչել խորագույն հիասթափությունն ու դաժանագույն ողբերգությունն ապրած Չարենցին, որովհետեւ չէր կարող կարդացած լինել նրա 1934-37 թթ. անտիպ ստեղծագործությունները, որոնց վրա ողբերգական հանճարի անփարատելի ցավի, նրա ու մեր ժողովրդի ապրած կարմրաշառյալ դաժանագույն օրերի դրոշմն է: «Հոգնալ այգաբացի» երգիչը հարկադրված էր «մառ մորմոցող մայրամուտ» երգել՝ սոսկալով իր ու ողջ հայ մտավորականության գլխին պտտվող «արեգնացյալ կացնից»: «Օտար հողմերին» միացած՝ «հայրենի դաշտերի քամին» Հայաստանից արմատախիլ էր անում հայության հուղերը, «գորշ, դեղին» տերեւների պես ցրում էր աշխարհով մեկ, որ գնան ու «թշնամի դաշտերում մեռնեն»:

«Հայ մտքի որձակը լափող ճարպիկ հարճորդու» հայատյաց



քաղաքականությունը նորանոր աղետներ էր բերում մեր եղեռնագարկ ժողովրդին, ոչնչացնում մեր մտքի ծաղիկը, հանճարեղ գրողներին ու գիտնականներին, անմեղ ու ազնիվ մարդկանց. միայն չարաբաստիկ 1937-ի մի քանի ամիսներին գնդակահարվել է Երեւանի պետական համալսարանի վեց ռեկտոր, մահապատժվել կամ բանտարկվել ու աքսորվել են Սարդարապատի Նշանավոր հերոսները, դրանց թվում՝ զորահրամանատարներ Յ. Սիլիկյանը, Դանիել-Բեկ Փիրումյանը, Ակսել Բակունցը, ռուսական բոլոր ռազմական պարգևներն ստացած, Սարդարապատի հրետանային վաշտի հեղափոխական հրամանատար Զրիստափոր

Արարատյանը եւ շատ ուրիշներ: Չարենցի այրող տողերում այդ անմեղ զոհերի, մեր ժողովրդի թանկ կորուստների կսկիծն է, որ խարանի պես դրոշմված է ողջ խորհրդային երկրի ու մասնավորապես նրա 1930-ական թթ. իրականության ճակատին: Հովհ. Շիրազը դառնությամբ էր հիշում համաժողովրդական վախի ու սարսափի այդ անպատմելի օրերը, որոնց տխուր վերնուշև է միայն «Քնար Հայաստանի» երկրորդ գրքում 1964 թ. լույս տեսած ու անարձագանք մնացած՝ ոչ թե խմբագրված, այլ ուղղակի հոշոտված «Ամեղուության հուշարձան» պոեմը՝ նվիրված 1937 թ. անմեղ հախառններին.

Շարունակությունը՝ էջ 6



Սկիզբը՝ 2017-ի թիվ 22-23

Սարոյանի մանկության մելոդրամայի ֆոնը նույնպես շատ կարեւոր է: Ֆոնն ասելով՝ Նկատի ունենք տարբեր եթնիկ խմբերի պատկանող աշակերտներին, որոնք հավաքված էին մեկ դասասենյակում: Թեեւ Սարոյանը երբեք խորապես չի բացահայտում տարբեր ազգերի փոխազդեցությունները, սակայն նա մշտապես մտահոգված է եղել ամերիկյան հասարակության մեջ ապրող ազգային փոքրամասնությունների ընդհանուր խնդիրներով:

Կախված արվեստագետի կյանքի տարբեր ժամանակահատվածներից՝ նրա ներքին կոնֆլիկտները պարբերաբար ավելի սաստկանում էին, ու սրա պատճառն անձնական ճգնաժամերն էին, որոնք «մղում էին սարոյանական ճոճածող դեպի լիակատար անկում»: Մերթ ընդ մերթ հայերի սարոյանական նկարագրությունները դառնում են առավել մռայլ, գրողի կենսախնդրությունը եւ լավատեսությունը փոխակերպվում են՝ վերածվելով ինքնաստելության, իսկ ընտանեկան կյանքի հետ կապված հայացքները ցնիզմի ենթանգ են ստանում: Այդ հայացքների մեջ

զգացվում է ինքնաճադրական մի բան: Այս ծայրահեղական դրսեւորումները հատկապես լավ են արտացոլված հիսունականներին գրված Սարոյանի երեք գործերում: Այդ ստեղծագործությունները լիակատար ազատություն են տալիս արվեստագետի ցասմանը: Այստեղ «արվեստագետի աշխարհայացքի սուր եզրերը կարծես հղկվել էին հայոց երգերի միջոցով»: Այդ երգերը կապված էին հայոց գաղթի, նրանց աշխարհասփռության հետ:

Այժմ անդրադառնանք Վիլյամ Սարոյանի երեք հայտնի ստեղծագործություններին: Խոսքն ամերիկահայ գրողի «Ասորին» նույնի է՝ «Ռոք Վահրամ» ու «Ծիծաղի առարկա» վեպերի մասին է: Նշված երկերը Սարոյանն ստեղծել է իր գրական գործունեության միջին շրջանում: Այս ստեղծագործական շրջանը համընկավ գրողի անձնական խնդիրների հետ. Սարոյանի երկրորդ ընտանիքը փլուզվում էր: Վերոնյայա ստեղծագործությունները հուշում են, որ «մեռնող ազգին» տանջող թախիծը թափանցել էր նաեւ գլխավոր հերոսի հոգու խորքը: Նա կարողանում է ժամանակավորապես

ՎԻՆՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԵՐԿՐԻ ԱՇԽԱՐԴՆԵՐԸ

ճերբազատվել այդ հոգեվիճակից այն ժամանակ, երբ ինքը չարժման մեջ է. թռչելիս, թռթախաղով զբաղվելիս կամ մրցավազքի ժամանակ: Իսկ հանգստի վիճակում Սարոյանի գլխավոր հերոսը կրկին հայտնվում է հոգեւոր քավարանում: Նա ի գորու չէ յուրացնելու իր նախնիների ոգին եւ ստեղծելու կենսունակ անձնական վարքականոսներ: Վիլյամ Սարոյանն իր ստեղծագործական գործունեության միջին շրջանում վերադառնում է այն թեմաներին, որոնք ժամանակին արժարժվել էին վաղ շրջանի պատմվածքներից մեկում: Խոսքը վերաբերում է գրողի «Երիտասարդ խիզախ մարդը շարժվող ճոճածողի վրա» պատմվածքին, որում երիտասարդը հրաժարվում է «Փրկության բանակ»-ի օգնությունից: Չէ՞ որ նա պատմախառնատու էր միայն իր կյանքի համար:

Վիլյամ Սարոյանի ավելի ուշ շրջանի երկերի գլխավոր հերոսները բախվում են ընտանեկան ճգնաժամի խնդրին: Այդ ճգնաժամի ընթացքում հայագիր հերոսների էթնիկ անցյալի չափօրինակները հիշեցնում են նրանց ընտանեկան թերությունների մասին: Հաջորդող յուրաքանչյուր ստեղծագործության մեջ էթնիկ խումբը ծառայում է երկակի նպատակի. մի կողմից այն արտացոլում է կենտրոնական գործող անձի հոգեւոր կտրվածությունն իր արմատներից եւ մյուս կողմից՝ համոզում նրան հավատարիմ մնալ ընտանեկան իդեալներին:

«Ասորին» նույնիսկ Սարոյանը գրում է այն բանի մասին, թե ինչպես է Փոլ Սքոթը մահվանից քիչ

առաջ վերաքննում իր կյանքի ուղին: Սքոթը մոլի թղթախաղաց էր: Սարոյանի հերոսը խաղաքարն արագորեն նետելուց զգում է ազատության շունչը: Նա ներքին բավարարվածության զգացում է ապրում, երբ կարողանում է այն հաջող նետել: Նա գալիս է Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոն: Այստեղ Սարոյանի հերոսը հասնում է իր կյանքի նպատակային թիրախին. գտնել հոգեղենություն: Նա խորատուգրվում է անցյալի հիշողությունների մեջ, իսկ հարազատ քաղաքի բնակիչների բարությունը եւ սիրալիրությունը մեղմում են նրա անհանգստության զգացումը: Շուտով ընթերցողը հասկանում է Սքոթի բնավորությունը: Սարոյանի հերոսը մշտապես դիմադրում է ամեն տեսակի սահմանափակումներին.

«Նա միշտ չափազանց հեռու էր գնում, բայց նա միշտ վերադառնում էր: Նա միշտ տախտակամածից ցած էր նետվում, հուսահատ ու լուռ լողում ծովում՝ հասկանալով, որ ինքն իր կյանքի համար է պայքարում: Նա փորձում էր պարզել, թե որքան հեռու կարող էր լողալ: Նա լուռ եւ արժանապատվորեն պայքարում էր բնության դեմ: Երբեմն նա անտարբեր էր, երբեմն գրեթե չէր պայքարում: Նա լոկ սպասում էր» (տե՛ս Saroyan W., The Assyrian, in the Assyrian and Other Stories (New York: Harcourt, Brace and Company, 1950), էջ 35):

Թույլատրելի սահմանն անցնելու կաշուն սովորությունը կարող էր հիվանդություն Նշան լինել: Պատմության սկզբնամասում Սքոթն իր հիվանդագին վիճակը

բացատրում է նրանով, որ ինքը դառնացած էր սեփական անձի հանդեպ: «Նա գիտեր, որ ինքը ոչ ոքի համար հոգ չի տանում, նույնիսկ իր դստեր համար: Նա մշտապես լոկ իր մասին էր մտածել եւ այժմ էլ միայն իր մասին էր մտածում» (տե՛ս Saroyan W., նույն տեղում, էջ 18): «Մշտապես» բառի կրկնությունը երկու պարբերություններում ընդգծում է Սքոթի ինքնամեկուսացումը: Վերջինս նրա համար դարձել էր ինքնապաշտպանության բնագոյանի միջոց:

Մինչեւ Լիսաբոնից հեռանալը Սքոթը ճաշում է մի անհավանականորեն հարուստ ծեր ասորու հետ: Կուրտի Ուրումիայի կերպարի նախատիպը, հավանաբար, հայազգի մուլտիմիլիոնատեր Գալուստ Գյուլբենկյանն էր, ով նույնպես բնակվում էր Պորտուգալիայում: Ի դեմս Կուրտի Ուրումիայի՝ տեսնում ենք մի մարդու, որը մեծ ախորժակ ունի, հոգեպես զգույն է ու գիտակցում է, որ կյանքի խաղն իր գործարար կյանքի խարդավաքների պես պետք է առնվազն զվարճալի թվա: Ի տարբերություն Սքոթի՝ մեծահարուստ ծերունին իրեն չափազանց հաջողակ է զգում: Նա վայելում է իր կյանքի յուրաքանչյուր ժամը, ինչպես կվայելեր իր ազգությամբ հույն խոհարարի պատրաստած ուտեստները: Ծեր մեծահարուստի ու Սքոթի միջեւ կա եւս մեկ տարբերություն. Սքոթը մտադիր է հրաժարվել յուրօրինակ ազգային կապերից, մինչդեռ ծերունին նման ցանկություն չունի: Ավելին՝ նա ընդդիմանում է Փոլի մտադրությանը:

Շարունակությունը՝ էջ 7

Սկիզբը՝ 2017-ի թիվ 19-20, 22

Անհաղթելի է սիրո ուժը. այն նույնիսկ անձնագոհության է հասցնում սիրող սրտին: Սիրուց խենթացած սիրահարը, «ճար» չգտնելով, պատրաստ է «աղուորի» համար ծառա դառնալ ու միշտ սիրել նրան.

Այս աստղնվորիս վերայ ես ումեն կեղևամ քեզ ծառայ.

Էնոք քեզ ծառայ կեղևամ, տի սիրեմ, որ ճար մի չկա...

Սակայն անձնագոհության հասնող սերը փոխադարձ է. գեղեցկուհին իրենց տուն է հրավիրում յարին, որպեսզի վերջինիս դարձնի ամիրա եւ ոչ թե ծառա, գեղեցկանա միայն նրա համար.

Բերեմ քեզ նռան գինի ու Հլպա կթխանի վերա.

Դեղեմ գիմ ծով-ծով աչերն՝ գիմ կամար ուներն ի վերայ... Էջ 121

Հաճախ է հարուստ գեղեցկուհին արհամարհում յարի գովասանքները, չի պատասխանում նրան, ցանկանում է, որ վերջինս միայն հիանա իրենով եւ ավելի ոչինչ չպահանջի. «Ստեղծողն ինձ երես տըլեր, քեզ աչեր, դու կանգնի՛ր ու տե՛ս»: Մինչդեռ սիրահարի համար միայն հիանալը մահվան է հավասար: Երբ նա յարին «կարմիր երես» է անվանում եւ արհամարհվում, մերժվում նրանից, «պատանք» է խնդրում իր համար, քանզի ապրելն այլեւս իմաստ չունի.

...Հանց որ մահրուս կու հանես, բեր պատանքն ու դիր գիս ի ներս...

Վերջինս, սակայն, ցավ զգալով, շունչ ու հոգի է պարզելում նրան՝ կանչելով. - *Հեռի՛ պատանքն ի քենէ, բանամ զծոցս, արե՛կ մուտ ի ներս...* Էջ 249

Քուչակյան հայրեններում բացահայտվում են կանացի բնավորության շատ ու շատ գծեր. հանդիպում ենք ոչ միայն սեթեւեթ, համարձակ, «եարի հուզու հետ խաղացող» «աղուորի», այլ նաեւ ամոթխած, իր արժանապատվությունը բարձր պահող գեղեցկուհու:

Արշակ Չոպանյանը գրում է. «Եարը, զոր կերգէ Քուչակ, երբեմն՝ առաւել կամ նուազ երկայն նագերէ յետոյ անձնատուր եղող սովորական պչրուհին ըլլալէ կը դադրի,

Նահապետ Քուչակ. սիրո մեծ երգիչը

անառիկ հուրի մը կը դառնայ, արհամարհոտ՝ իր ոտքին տակ գալարուող պաղատանքի խունկերուն» (*Նահապետ Քուչակի դիվանը*, էջ 36):

«Անմատչելի» յարն իրեն համարում է «վայրի վարճինակ», եւ եթե սիրահարը «ոսկի խաֆես» էլ չիկի, միեւնույն է՝ «գիս ի ներս դնել չկարես»: Նա ամուր է՝ քարի նման, եւ այնքան բարձր՝ ամպի նման, որ ոչ ոք չի կարողանա իրեն հասնել: Սակայն երբեմն «աղուորը» պատրաստ է մեղմանալ, եթե իր սիրուն հասնել ձգտողը քաջորդի է: Գնահատելով իրեն՝ հպարտ կինը ցանկանում է, որ իր սիրելին եւս կատարյալ լինի, որպեսզի արժանանա իր սիրուն.

...Բարձր եմ թուխ ամպիդ նըման, որ ոչ ով ի յիս չի հասնի.

Աղեղն եզնեսի լինի ու լարն ի վերայ գալեսի.

Քաշողն քաջորդի լինի, հապայ թե իմ սիրուն հասնի: Էջ 218

Չքնաղ «կօզալը» արժեւորում է նաեւ իր համբույրները: Իրենից «պագ» խնդրողին նա հայտնում է, թե՛ «Պագիս գին ունի», եւ դրա դիմաց պահանջում է սիրահարի հոգին՝ հավերժական սեր: Իսկ մեկ այլ հայրենում «խօշ եարն» իր «թուխ ու գռուզ կտրիճին» պատրաստ է նույնիսկ հազար «պագ» տալ, եթե վերջինս, «մեջլիսում» հարբելով, չպարծենա, թե սիրելիից համբույր է առել.

...Պագ հազար՝ թե պարծենաս ոչ. ...Չպագն ի քեզ պարծանք հաշուես, զամօթուդ տեղըն գիտես ոչ: Էջ 279

«Աղուորի» մեղմանալու մասին Ա. Չոպանյանը գրում է. «Երբեմն ալ «եարը» այդ անողոքելի անմատչելիությունը,- որ արդէն աւելի մեծ զոհողություններով նուաճելու թաքուն տեսնէ է,- կը մեղմանայ քիչ մը՝ դիցազնական յատկութեանց ապացոյց մը պահանջելով իր համբոյրին վայելմանը փոխարեն» (*Նահապետ Քու-*

չակի դիվանը, էջ 37): Առեղծվածային է կնոջ Եությունը՝ հաճախ անբացատրելի եւ անիմանալի: Նրան հաճելի է անորոշության մեջ թողնել սիրելիին. ո՛չ սեր արտահայտել, ո՛չ էլ մերժել: Սա մի յուրօրինակ խաղ է կնոջ կողմից ստեղծված, իրենով հիացնելու միջոց, որով խելագարության է հասցնում սիրելիին, էլ ավելի սիրել տալիս իրեն, դառնում ավելի ցանկալի եւ ինքնատիպ: Այդպիսի տարակուսանքների ենթարկվելն ու դրանից «տառապելը» ինչ-որ տեղ հաճելի է տղամարդուն: Վերջինս գիտակցում է, որ դա ընդհամենը խաղ է, եւ որ սիրո հարուցած յուրաքանչյուր տառապանք գրավիչ է ու ցանկալի. *Դու ո՞վ ես՝ յերդիկդ ելեր զայդ օտար հողըդ կու կոխես. Թե վարդ ես նե՛ վար եկո՛ւ, թե օտար ծաղիկ հա գընա. - Ո՛չ վարդ եմ ի վար գալու, ՚լ ո՛չ օտար ծաղիկ գընալու. Եկեր սիրուդ եմ առեր, ո՛չ գալու եմ, ՚լ ո՛չ գընալու: Էջ 134*

Համարձակ գեղեցկուհին «կտրիճին» խելքամաղ անորոշության է մատնում՝ գալով նրա երդիկն ու գրավելով սիրտը, սակայն միեւնույն ժամանակ չի ցանկանում բացահայտ արտահայտել իր սերը՝ զվարճանալով՝ նրան երերուն վիճակում պահելու համար: Քուչակի սիրո հայրեններն իրենց զգացմունքի ուժով երկու իրավահավասար սիրահարների երկխոսություններ են, որոնց զրույցին, սակայն, լռելայն ականջ է դնում ինչ-որ լրտես: Դա միջավայրի պահպանողականությունն է՝ կենցաղային, բարոյական, սոցիալական նախապաշարումները (*Նահապետ Քուչակ, Հայրենի կարգավ, էջ 23-24*): Քուչակյան հերոսը պայքարում է հետամնաց հասարակության դեմ, որը ձգտում է սպանել այն, ինչը կենդանի ու գեղեցիկ է



մարդկային սրտում: Նա վիճում է, իր ցանկացածը կատարում գաղտնի, երբեմն էլ դառնորեն արտասվում է այդ ուժի անհաղթահարելիության գիտակցությունից: Սիրահարն արդարացիորեն իր բողոքի ձայնն է բարձրացնում ընդդեմ նրանց, ովքեր ամենուր հետեւում, մատնացույց են անում իրեն, կարծես փորձում են պատասխանատվության ենթարկել սիրելու համար. *...Յորտեղ որ կանգնած տեսնուն, մատնացոյց կ'անես, թե՛ «Նա է». Ագեստ մարդ ենք սպանել, կ'անես, թե՛ «Արեկ վըճարէ»: Էջ 170*

Սերն ամենաքաղցր պտուղն է (*«Քան զսերն այլ քաղցրիկ պտուղ ի յաշխարհս չավտամ թե լինի», էջ 148*)՝ մարդու բնական իրավունքը. ամեն սիրտ պիտի ազատ լինի՝ դա ճաշակելու համար: Սակայն ի՞նչն է պատճառը, որ ամենուր բամբասում են, համարում հանցավոր, միջամտում սիրային գործերին: Իր իրավունքը պաշտպանող սիրահարը չի ցանկանում դառնալ նրանց հոգի, պատրաստ է պայքարել «չար փուշ պատուղին ճկրուն» եւ վստահ է՝ *«Ով որ սիրո տեր մարդուն մեղադրե, ինքն է ատելուն» (էջ 145):*

*Շարունակելի
Վարդան ԵՂԻԱՉԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ*



*Սկիզբը՝ էջ 5
Եվ ամեն մի գիշեր անհամար ամեն տուն, Ամեն սիրտ, ամեն դուռ կսպասեր, Թե հիմա կմտնեն, կտանեն իր որդուն, Իր հորը կամ իրեն կտանեն...*

Կտանեն, կհանեն եղունգներն, աչքերը, Որ ասի՝ «Իրավ թույն եմ երկրին».
Ու մեռան խիղճ ու սեր, ու դարձավ երկիրը Կասկածի ծով կծիկ մի մթին:

Ու դարձավ Սիրիքը գերեզման բյուրերի՝ Այս իրավ փոքրամարդ մեծ դարում, Եվ դարը նմանվեց աչքաբաց կույրերի՝ Չրպարտման սարսափը աչքերում:

Եվ հիմա էլ ոչ մի գանգրահեր պատանի Չի գտնի գերեզմանն այն կորած, Ուր պոետն է մեռյալ մռնչում կենդանի՝ Նոցա հետ, որ ընկան վախվորած:
Այս պոեմը, որն առավել շատ է տուժել գլավլիտային մկրատից, այդ դժոխային օ-

ԵՐԻՇԵ ՉԱՐԵՆՑ ԵՎ ՎԱՅԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ. ՄԻ ԵԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

րերի արձագանքն է, պատկերը այն սոսկալի իրականության, որի սարսափներից զերծ մնացին միայն «կարմիր գծից անդին» ապրած ազատախոհ հայ մտավորականները, որոնց թվում եւ Ն. Աղբալյանն ու Վ. Նավասարդյանը:

5. Վ. Նավասարդյանի՝ Չարենցի մասին այս անչափ կարեւոր գիրքը փաստորեն ստեղծվել է մեզանում չարենցագիտության հարկադիր դադարի խայտառակ ժամանակներում: Այն իր սուր հարցադրումներով, փաստական հարստությամբ, չարենցյան երկերի անկաշկանդ, համարձակ ու հմուտ վերլուծումներով շատ հարցերում կանխել է հետագա հեղինակավոր չարենցագետներին, որոնք իրենց լավագույն աշխատություններն ստեղծեցին Նավասարդյանից անկախ ու նրանից հետո՝ 1950-ական թթ. կեսերից: Ընդ որում՝ իր գիրքը գրելիս Նավասարդյանը ծանոթ չի եղել Չարենցի անտիպ ժառանգությանը՝ թաքստոցներից ու մասնավոր հավաքածուներից հետագայում հայտնաբերված ձեռագրերին: Այսինքն՝ Վ. Նավասարդյանը տպագրվածի՝ «Գիրք ճանապարհին» ներառյալ Չարենցի գիտակն է, եւ նրա գիրքը նաեւ այս իրողության ճշմարտացի ու վավերական հաստատումն է՝ հազեցած այնպիսի փաստական նյութերով, այնպիսի կարեւոր մանրամասներով, որոնց զգալի մասի առաջին շրջանառողն է ինքը: Անչափ կարեւոր է, որ Նավասարդյանը նկատել ու ծիշտ է ըմբռնել զարգացման

այն դժվարին ընթացքը, որով անցել է Չարենցը՝ հեղափոխական բուռն ոգեւորությունից մինչեւ նվիրական երազանքների փլուզում, ազգային փրկության ու վերածնության հույսերից մինչեւ 1930-ական թթ. գրական կյանքից, ողջ խորհրդային արյունոտ իրականությունից դառն հիասթափություն ու ծանրագույն ողբերգություն:

Հասկանալի է, որ հայրենիք-սփյուռք կապի անկանոնության պայմաններում Վ. Նավասարդյանը չէր կարող անմիջական առնչություն ունենալ 1920-30-ական թթ. հայաստանյան իրականությանն ու մանավանդ գրական կյանքին: Ուստի տեղեկատվության պակասը պիտի լրացվեր փաստական նյութի աստիճանական կուլակումով: Այդ պատճառով էլ Չարենցի մասին իր գիրքը նա թեւեւ պատրաստել էր 1946 թ. կամ գուցե ավելի ուշ՝ բոլոր դեպքերում Չարենցի մասին եղած գրականությունն ու մամուլը ուսումնասիրելուց հետո, բայց նույն տարում նա չէր կարող հրատարակել, որովհետեւ Չարենցն այդ ժամանակների խորհրդային երկրում դեռեւս արգելված անուն էր, եւ ծանր փորձությունների պիտի ենթարկվեին նրա անունը հնչեցնողները կամ Վ. Նավասարդյանի գիրքն ունեցողներն ու ընթերցողները: Ահա ինչու նա իր գիրքը պիտի հրատարակեր «հանցակազմի բացակայության պատճառով» Չարենցի պետականորեն արդարացումից ու վերականգնումից հետո միայն:

Այս գրքի կարեւոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ Վ. Նավա-

սարդյանը, անշուշտ Ն. Աղբալյանից ստացած ներշնչումներով, հանիրավի մերժված, մոռացության դատապարտված Չարենցի գնահատել է որպես հզոր անհատականության, որպես դարի մեծագույն բանաստեղծական երեւույթներից մեկի: Բայց հենց այստեղ էլ դրսեւորվել են Նավասարդյանի գրական բարձրագույն ճաշակն ու բանաստեղծության նուրբ զգացողությունը, գրական ու կենսական փաստերը համադրելով, իրարից բխեցնելով վերլուծելու հզոր կարողությունը: Չնայած հեռավորությանն ու արգելքներին՝ նա ժամանակի գրեթե բոլոր երեւելիներին, մանավանդ Չարենցին առնչված մարդկանց հրաշալի ճանաչել է՝ եւ բարեկամներին, եւ՝ թշնամիներին, որոնց բուրիին էլ արժանին է մատուցել՝ ըստ Չարենցի կյանքում ու ճակատագրում խաղացած դերի:

Այս իմաստով ուսանելի են Աղբալյան-Չարենց հարաբերության նավասարդյանական դիտարկումները, որոնք մասնավորից վերաճում են ընդհանրապես գրող-քննադատ օրինակելի հարաբերության գիտական բնութագրման:

Ընդ որում՝ գրական փաստի նկատմամբ զգայուն ու նրբանկատ Նավասարդյանը երբեմն էլ համամիտ չէ աղբալյանական բնորոշումներին եւ ըստ հարկին՝ բանավիճում է նրա հետ հանուն Չարենցի:

*Շարունակելի
Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*



Նայասանի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման մարմինների առանձնահատկությունները

Այսօր զարգացած երկրները կանգնած են նոր հասարակության կերտման շեմին, որն իրականացվում է առավելապես բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխություններով, ինտեգրացիայի եւ գլոբալիզացիայի ճանապարհներով: Արդյունքում տարբեր երկրների բարձրագույն կրթության համակարգերում ի հայտ են գալիս կառավարման նոր մարմիններ:

Այդ համատեքստում հետաքրքրական է դիտարկել մի շարք երկրների օրինակներ, որոնք ունեն կառավարման տարբեր մոդելներ: Որպես օրինակ ներկայացնենք Հայաստանի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման մարմինների առանձնահատկությունները:

ՀՀ ժամանակակից կրթության համակարգը կրում է ապակենտրոնացված կառավարման բնույթ, որն իրականացվում է հետեւյալ մակարդակներով՝ ՀՀ Կառավարություն, ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն, մարզպետարաններ եւ բուհեր: Այսպիսով՝ կրթության կառավարումը իրավական առումով բաշխվում է հանրապետական եւ մարզային ոլորտների, ինչպես նաեւ բուհերի կառավարման մարմինների լիազորությունների միջեւ: ՀՀ բուհերի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրության եւ բուհի կանոնադրության համաձայն: Վերջինս, իր հեր-

թին, հիմնված է ինքնակառավարման, ինչպես նաեւ միանձնյա եւ կոլեգիալ կառավարման սկզբունքների համատեղության եւ համալսարանական խորհրդի, գիտխորհրդի եւ ռեկտորատի գործառնությունների իրականացման վրա:

Ի տարբերություն Հայաստանի եւ Գերմանիայի՝ Ֆրանսիայի բուհերը բազմատեսակ են: Բարձրագույն կրթության համակարգն այստեղ դիտարկվում է որպես միասնականացված եւ կենտրոնացված կառավարման վրա հիմնված համակարգ: Չնայած որ վերջին երկու տասնամյակներում Ֆրանսիայում սկսվել է ապակենտրոնացման գործընթացը, որի շնորհիվ ինքնավարության մեծամասնությունը տրվել է պետական դեպարտամենտներին, տարածքային եւ ռեգիոնալ իշխանություններին, պետությունը շարունակում է պահպանել կրթության կառավարման իր գործառնությունը:

Գերմանիայի բարձրագույն կրթության համակարգը կրում է կառավարման խառը բնույթ եւ հանդես է գալիս եռամակարդակ համակարգով: Այն իրենից ներկայացնում է դաշնության կենտրոնի, հողերի եւ բուհերի միջեւ կառավարման լիազորությունների հավասարաչափ բաշխման օրինակ, որին բնորոշ է իշխանության կենտրոնական եւ տեղային մարմինների միջեւ գործառնությունների հստակ բաշխումը:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ՀՀ բարձրագույն կրթության համակարգի պետական կառավարումը դրված է ՀՀ կր-

թության եւ գիտության նախարարության վրա, որն իրականացնում է կազմակերպական գործառնություններ, ֆինանսավորում, լիցենզավորում, վավերացում, ինչպես նաեւ բուհերի գործունեության ստուգումներ: ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հիմնական խնդիրներն են ազգային կրթական քաղաքականության իրականացումը, օրենսդրական եւ անհրաժեշտ նորմատիվային փաստաթղթերի նախապատրաստումը՝ համապատասխան պետական որոշումների ընդունման համար, բարձրագույն կրթական համակարգի տարբեր հիմնախնդիրների որոշման նպատակային ծրագրերի մշակումը:

Ռեգիոնալ եւ համայնքային մակարդակների վրա ՀՀ կրթության եւ գիտության նախարարության մարմինները նախ եւ առաջ պատասխանատու են պետական քաղաքականության իրականացման համար՝ նվազագույնը միջամտելով բուհերի գործունեությանը: Ռեգիոնալ եւ համայնքային վերահսկողության մարմինները ցուցաբերում են ֆինանսական, իրավական եւ կուլթատեխնիկական աջակցություն, ինչպես նաեւ ընդունում են անհրաժեշտ որոշումներ իրենց ենթակայության տակ գտնվող ուսումնական հաստատություններում նորմալ աշխատանքային պայմաններ ստեղծելու համար (Филиппов В. М., Реформы образования, Аналитический обзор, «Центр сравнительной образовательной политики», Москва, 2003, էջ 227):

Ֆրանսիական բարձրագույն կրթության համակարգի առանձնահատկություններից է ռեգիոնալ մակարդակում Ազգային կրթության նախարարության «ներկայացությունների»՝ ակադեմիաների առկայությունը: Ակադեմիաների ռեկտորներն ունեն բավականին ընդլայնված լիազորություններ՝ կրթության բոլոր մակարդակների վերահսկողության եւ կոորդինացման համար: Դրանք կապող շղակներ են Ազգային կրթության նախարարության եւ բուհերի միջեւ: Ակադեմիայի ռեկտորը բուհերի կառավարման խորհուրդների կազմի անդամ է:

Ֆրանսիայի բուհերի առավել կարեւոր կառավարման մարմիններն են՝ վարչական, գիտական, նաեւ ուսումնական գործերի եւ համալսարանական կյանքի խորհուրդները: Թվարկված բոլոր երեք խորհուրդների ներկայացուցիչները մասնակցում են Ֆրանսիայի համալսարանի նախագահի ընտրությանը:

Ֆրանսիայի բարձրագույն կրթության ղեկավարումն իրականացվում է պետության կողմից: Այստեղ բարձրագույն կրթության հիմնական հարցերով եւ հիմնախնդիրներով զբաղվում եւ պատասխանատվություն է կրում կենտրոնական պետական մարմինը՝ Ֆրանսիայի ազգային կրթության նախարարությունը՝ իր գլխավոր տեսուչներով, որոնք, իրենց հերթին, վերահսկում են կրթության որոշակի ոլորտը:

Շարունակությունը՝ էջ 8

ՎԻՆՅԱՆ ՍԱՐՈՅԱՆԻ ԵՐԿՐԻ ԱՇԽԱՐԴՆԵՐԸ

Սկզբը՝ էջ 5

Մահանալուց առաջ Սթոքը, անտեսելով բժշկի խորհուրդը, դեպի արեւելք թռչող ինքնաթիռ է նստում: Նա իր իսկ ընտրությամբ մինչեւ մահ մտնում է նույնքան մենակյաց, ինչպիսին որ կար իր ողջ կյանքի ընթացքում:

«Ատրիկ» երկի հրատարակումից մեկ տարի անց՝ 1951 թ., Սարոյանը հրատարակում է «Ռոք Վահրամ» վեպը: Վերջինիս մեջ ամերիկահայ արձակագիրը վերադառնում է նույն հարցերին, որոնք արդեն արժարժվել էին նախորդ ստեղծագործության մեջ, սակայն այս անգամ գրողն այդ հարցերը գետնորում է ավելի որոշակի էթնիկ համատեքստի մեջ: Ռոքի արագ տեղափոխումը Հոլիվուդի սոցիալական շրջապատ առավել ցայտուն կերպով դրսևորվում է նրանում, որ նա փոխում է իր անունը, որպեսզի այն ավելի համահունչ լինի իր դերասանական կարիերային: Չնայած իր նոր անվան կայուն ենթատեքստի, սոցիալական ինքնության փոփոխությանը՝ երկրորդ սերնդին պատկանող այս հայը կտրվում է իր ֆրեզկոյաբանական ընտանիքից ու ընկերներից եւ հայտնվում մի աշխարհում, որտեղ ընդունված չէր հեշտությամբ ընկերանալ որեւէ մեկի հետ:

Ուշագրավ են Ռոքի եւ Սթոքի մտածելակերպի տարբերությունները. եթե Սթոքը ձգտում է անկախ լինել սեփական ընտանիքից, ապա Ռոքը կարելու է ընտանիքը: Ահա թե ինչ է ասում Ռոքն ընտանիքի նշանակության մասին. «Մարդն ընտանեկան էակ է: Նրա կյանքի իմաստը ընտանիքն ունենալու մեջ է» (տե՛ս Saroyan W., Նույն տեղում, էջ 282): Ինչեւէ, Սարոյանի հերոսին այդպես էլ չի հաջողվում կյանքի կոչել իր հա-

մոզմունքները: Ռոքի փոխհարաբերություններն իր ամուսնալուծված կնոջ հետ ոչ այլ ինչ են, եթե ոչ Սթոքի ընտանեկան հարաբերությունների առավել լարված տարբերակը: Այստեղ կինն անձնավորված է որպես մի վայելչատես, ընչաքաղց, թեթեամիտ, չարական ու թունոտ էակ, ով չի կարողանում արժանանալ իր ամուսնու սիրուն եւ վստահությանը:

Սարոյանի գրվածքի հայազգի հերոսուհին, տեսնելով Ռոքի հոգեվիճակը՝ կապված ընտանեկան հարաբերությունների ծախողման հետ, ասում է հետեւյալը. «Օտարագրուհու հետ ընտանիք կազմելը հավանաբար բախտախնդրություն է: Հարցն այն է, թե արդյո՞ք կարող է օտարագգի աղջիկը, ով մեզ չի հասկանում, դառնալ իսկական կին մեր որդիների համար: Արդյո՞ք այլազգի աղջկա աչքը մշտապես չի նայելու դեպի դուրս: Արդյո՞ք ճիշտ է, որ մեր որդիները կնության առնեն օտարականի աղջկան (տե՛ս Saroyan W., Նույն տեղում, էջ 83):

Ռոքի ամուսնությունն Աննա Ֆորդի հետ վայրկեական քմահաճույք չէր: Սարոյանի հերոսը մտաբերում է, թե ինչպես էր ինքը եկեղեցական հավաքների ժամանակ հանդիպում հայազգի կանանց, որոնց նա ճանաչել էր դեռեւս երիտասարդ տարիներից: Ռոքն այդ բոլոր կանանց վերաբերվում էր այնպես, ինչպես կվերաբերվեր իր ջուլյերին: Ահա թե ինչու նրանցից որեւէ մեկին կնության առնելն անընդունելի էր Ռոքի համար (տե՛ս Saroyan W., Նույն տեղում, էջ 95): Ի դեպ նշենք, որ հենց ինքը՝ Սարոյանը, ամուսնացած է եղել օտարագգի կնոջ հետ:

Եթե վերը հիշատակված հայուհին կասկածում է օտարագգի տղամարդու հետ ամուսնանալու

նպատակահարմարությանը, ապա Ռոքի մայրը եւ տատը պարզապես պաշտում են Ռոքի կնոջը՝ Աննա Ֆորդին: Միևնույն Ռոքը դժվարանում է ներել կնոջը՝ նրա թեթեամիտ արարքների պատճառով: Նշված մանրամասնությունն իսկույն եւեթ սքոդում է ինքնակենսագրական ճշմարտությունը. ինչպես հայտնի է, Սարոյանի ընտանիքը սառն ընդունելություն էր ցուցաբերել նրա երիտասարդ կնոջ հանդեպ՝ օտար ծագման պատճառով: Այս իրողությունը կարելի է բնորոշել որպես կարծրատիպային այլատեսություն, ինչը բավականաչափ տարածված էր հայերի շրջանում:

Վեպի գործողությունների ծավալմանը զուգընթաց՝ ընթերցողը տեսնում է, որ Ռոքի ընտանիք ձեւավորելու անկարողությունը բխում է նրա կենսափորձի առավել խոր շերտից, ավելի կոնկրետ նրա ու իր հոր նախնիներում ունեցած բարդ փոխհարաբերություններից: Սարոյանի հերոսը կարծում է, որ հայազգի յուրաքանչյուր որդի ծնված օրվանից արդեն իսկ հայր է: Հայրերի առաքելությունն է դիմակայել կյանքի դժվարություններին, պաշտպանել իրենց ընտանիքներն արտաքին աշխարհի քառսից: Բայց ինչպե՞ս կարող է մարդը հասուն հայր դառնալ, եթե մանուկ հասակում անպաշտպան է եղել եւ չի ստացել պատշաճ դաստիարակություն:

Ռոքն իր մոր վախճանից հետո նկատում է, թե ինչպես է իր ընտանիքը գնալով ավելի ու ավելի փլուզվում: Այդ ժամանակ Սարոյանի հերոսը վճռում է ամեն բան նորից սկսել եւ ջանում է հաշտության եզրեր գտնել կնոջ հետ: Բայց մինչեւ այդ ուղղությամբ ջանքեր գործադրելը նա փորձում է եւս մեկ



անգամ բացահայտել իր հոր թողած ժառանգության առեղծվածը: Դրա համար նա իր ձեռքն է վերցնում մի բանաստեղծություն, որ հայրը գրել էր իր ինքնասպանության օրը եւ ուղղարկել էր հայ քահանային՝ այն թարգմանելու նպատակով: Բանաստեղծությունն արտահայտում էր հոր դառնացած լիներու զգացողությունը: Այս հոգեվիճակի պատճառն այն էր, որ որդին երես էր թեքել Հին Աշխարհի սովորությունից ու դրվածքից: Նրա որդին մի մարդ էր, որը ոչ թե Աստծուն է սիրում, այլ մարդ արարածին եւ հատկապես թշնամուն՝ թուրքին (տե՛ս Saroyan W., Նույն տեղում, էջ 269): Այստեղ թուրքը խորհրդանշում է այն ամենը, ինչը սպառնում է հայ ընտանիքի դրվածքին ու սովորություններին:

Վերը հիշատակված հայ հոգեւորականը գովաբանում է Ռոքի հոր գրած բանաստեղծությունը, սակայն Ռոքի՝ իբրեւ զավակի արձագանքը վկայում է նրա էմոցիոնալ դատարկության մասին: Որքան հայրն էր վշտացած որդուց՝ նրա ամերիկանացման պատճառով, ճիշտ այնքան էլ որդին էր վշտացած հորից՝ նրա գործած ինքնասպանության պատճառով: Ահա թե ինչ է ասում Ռոքն այս առնչությամբ. «Ես մտադիր չեմ որեւէ պատճառով ինքնասպան լինել: Ես նմանապես չեմ սպանի ո-

րեւէ մեկին եւ կասեմ, թե ինչու: Ես ուզում եմ, որ որդիս իմանա, որ իր հայրը ողջ է եւ քայլում է այս աշխարհով: Թող նա իմանա, որ ես նրանից ոչինչ չեմ պահանջում եւ ոչինչ նրան չեմ առաջարկում: Բայց երբ որդիս ընկերոջ հետ կիսվելու կարիք գգա, նրա հայրը կլինի այդ ընկերը» (տե՛ս Saroyan W., Նույն տեղում, էջ 271): Ռոքը մինչեւ վերջ պահպանում է իր վճռականությունը՝ հոր սխալը չկրկնելու համար: Ի տարբերություն Փոլ Սթոքի, որը գնում է արեւելք՝ մահանալու համար, Ռոք Վահրամը սեփական անձի մասին իր վերլուծությունն ավարտում է ավելի դրական նոտայով. «Ես չեմ սիրում աշխատել հանուն փողի, բայց ես ստիպված եմ փող աշխատել, քանի որ ես հայր եմ ու այլընտրանք չունեմ» (տե՛ս Saroyan W., Նույն տեղում, էջ 300): Բայց չնայած այս խոստմանը՝ պատմությունն ավարտվում է սարոյանական ձեւով. Ռոքը միայնակ հատնվում է ճանապարհի վրա՝ ձեռքում ամուր սեղմելով նախկին սիրո հիշատակը (Աննա Ֆորդի տված մի կեղծ դրամ, որի վրա հեգնական ձեւով եւ տառապալով դաջված էր՝ «Ես սիրում եմ քեզ»):

Շարունակելի


Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Տրասարակվել է

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2017 թ.)

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել.

-«Հայ Եկեղեցու պատմություն» շարքի հերթական մենագրությունը՝ «Աղթամարի կաթողիկոսության պատմություն» գիրքը՝ աշ-



խատասիրությամբ պ. գ. դ. Վրեժ Վարդանյանի:

Մենագրությունն ընդգրկում է Աղթամարի կաթողիկոսության


պատմությունը՝ հիմնադրման 1113 թվականից մինչեւ 1895 թ.:

Աղթամարի կաթողիկոսությունը, որի պատմության լուսաբանումն անհրաժեշտ է Հայ Եկեղեցու անցյալի համակողմանի ուսումնասիրության համար, իր ուրույն տեղն ու դերն է ունեցել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բազմադարյան պատմության մեջ: Հեղինակը հանգամանորեն ներկայացրել է Աթոռի պատմությունը՝ ըստ Աղթամարի կաթողիկոսների գահակալության ժամանակաշրջանների:

-«Ոսկանյան Աստվածաշնչի պատկերները» գիրքը («Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի հետ համատեղ)՝ նվիրված Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրության 350-ամյակին: Գրքի մտահղացման հեղինակը Մայր Աթոռի մատենադարանի տնօրեն Արարատ քին. Պողոսյանն է:

Ոսկանյան Աստվածաշունչը ոչ միայն առաջին հայերեն տպագիր Աստվածաշունչն է, այլեւ այն քչերից մեկը, որ իր մեջ պարունակում է փորագրապատկերներ: Պատկերների հրատարակության հետ մեկտեղ բացատրվում են յու-

րաքանցյուր պատկերի պատկերագրական առանձնահատկություններն ու զուգահեռները, բերվում են դրանց վերաբերող սուրբ-գրային հատվածները: Առանձին հավելվածով ներկայացված են Ոսկանյան Աստվածաշունչում օգ-



տագործված գլխագրերը, վերջնագրողները եւ էջագրողները:

Նկարների մեկնաբանությունները պատրաստել է Արփինե Սիմոնյանը, խմբագիրն է Գեորգ Տեր-Վարդանյանը:

-«Արարատ»-ի բնագիրները» գրքի Բ հատորը, որը հրատարակության է պատրաստել Սուսաննա Նահապետյանը:

Գրքում ավարտված են ներկայացված են Մայր Աթոռի «Արարատ» հանդեսի հրատարակման ամբողջ ընթացքի՝ 1868-1919 թթ. տարիներին, պաշտոնաթերթի,

միաբանության եւ նրա առանձին անդամների բնագրական հետաքրքրությունների եւ իրագործումների ամբողջական պատկերը, լայն ընդգրկումն ու տարողությունը: Երկրորդ հատորում հրատարակված են ընդհանուր թվով 107 չափածոներ, շարականներ, Եկեղեցու հայրերի գրվածքներ, կանոններ, վարքագրություններ, դավանաբանական եւ ջատագովական թղթեր, ձեռագրերի նկարագրություններ եւ ինչպես նաեւ արաններ ու այլ արժեքավոր բնագրեր:

-Թովմա Մեծոփեցու «Հիշատակարանը» (բնագիրը զուգահիշ՝ գրաբար եւ աշխարհաբար): Գիրքը հրատարակության է պատրաստել Մայր Աթոռի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենա-



դարանի եւ հրատարակչական բաժնի տնօրեն Արարատ քին. Պողոսյանը: Աշխատությունը գրաբարից աշխարհաբար է փոխադրել բանասիրական գիտությունների դոկտոր Արշակ Մադոյանը:

Թովմա Մեծոփեցու «Հիշատակարանը» Կաթողիկոսական Աթոռի՝ 1441 թ. Սսից Սուրբ Էջմիածին վերադարձին նվիրված գլխավոր վավերագիրն է, Հայ Առաքելական Ս. Եկեղեցու եւ հայ ժողովրդի պատմության նոր շրջափուլի խոստուն վկան, որով եւ պայմանավորված է դրա պատմական անգնահատելի արժեքը: Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

-«Տոնապատճառ» ժողովածուի (Վարդան Հաղբատեցու, Վարդան Արեւելցու եւ Հովհաննես Գանձակեցու խմբագրությունները) առաջին մասը:

Ժողովածուի բնագիրը՝ խմբագրությամբ պ. գ. դ. Գեորգ Տեր-Վարդանյանի, հրատարակության է պատրաստել Աննա Օհանջանյանը:

Այն բովանդակում է «Տոնապատճառ» ժողովածուի առաջին տասներկու ճառերը, որոնցում քննության են առնվում Ս. Ծննդյան, Ս. Մկրտության եւ Տյառնընդառաջի տոներին եւ եկեղեցական տոնակատարություններին առնչվող խնդիրներ՝ հակաերկաբնակության դիրքերից:

Սույն գրքերը հրատարակվել են «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի մեկենասությամբ:

Սկիզբը՝ էջ 7

Կրթական քաղաքականության մշակումը եւ իրականացումը կատարում են նախարարության կառավարման խորհրդակցական նոր մարմինները, որոնցից են՝ Բարձրագույն կրթության եւ գիտական հետազոտության ազգային, Համալսարանների ազգային, Ուսումնական ծրագրերի ազգային խորհուրդները եւ Ազգային գնահատման կոմիտեն:

Գոյություն ունի նաեւ Ֆրանսիայի համալսարանների նախագահների կոնֆերանս, որը ներկայացնում է մոդերնիզացման գործընթացում ֆրանսիական տարբեր բուհերի միջեւ ֆորում-քննարկումներ եւ միջբուհական համագործակցային փոխազդեցություններ: Ֆրանսիայում բարձրագույն կրթության մոդերնիզացման հարցերով զբաղվում են նաեւ Գլխավոր քարտուղարների ասոցիացիան եւ Համալսարանների մերձեցման գործակալությունը:

Գերմանիայի բարձրագույն կրթության կառավարման ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հաշնության կենտրոնը՝ Գերմանիայի կրթության եւ մշակույթի նախարարությունը: Այն մշակում է կրթական քաղաքականության հայեցակարգը, ձեւավորում է կրթական համակարգի ընդհանուր ազգային օրենսդրական դաշտը, հատկացնում է միջոցներ բուհերի արդյունավետ գործունեության համար:

Գերմանիայում կրթության ընթացիկ կառավարումը գտնվում է հողերի կառավարման իրավասության տակ եւ կարգավորվում է բարձրագույն կրթության մասին հողերի համապատասխան օրենքներով: Հաշնության հողերի քաղաքականությունը կողորդի նաեւ համաձայնեցված է (նաեւ ուսուցման, արձակուրդների տեւողության, ուսումնական ծրագրերի բովանդակության, դիպլոմների փոխադարձ ճանաչման, բուհերի ինքնակառավարման հարցերում) բարձրագույն կրթության համակարգի հիմնական ղեկավարող մարմինների հետ, որոնցից են՝ Գերմանիայի հողերի կրթության եւ մշակույթի

Նայասանի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի բարձրագույն կրթության համակարգերի...

նախարարների մշտական կոնֆերանսը, Գերմանիայի բուհերի ռեկտորների կոնֆերանսը, Կրթության պլանավորման եւ հետազոտությունների զարգացման Հաշնության հողային հանձնաժողովը, Գիտության խորհուրդը, որն իրենից ներկայացնում է գլխավոր խորհրդակցական մարմին եւ միավորում է Հաշնության եւ հողային կառավարության, գիտականների եւ հասարակության ներկայացուցիչներին:

Բուհերի իրավասության մեջ ավանդաբար մտնում են գիտական եւ ուսումնական գործընթացների կազմակերպումը եւ պլանավորումը: Այսօր Գերմանիայի բուհերի իրավասության ոլորտը Հայաստանի եւ Ֆրանսիայի համեմատ զգալի ընդլայնված է, ինչն էլ պայմանավորված է կառավարման ապակենտրոնացման առաւել ձգտումով: Այն Գերմանիայի բարձրագույն կրթության մոդերնիզացման խնդիրներից մեկն է: Հողային իշխանությունները բուհերին են փոխանցում ֆինանսական եւ վարչական մի շարք հիմնահարցերի որոշումների իրականացման իրավասություններ՝ իրենց վրա վերցնելով բարձրագույն կրթության ոլորտի ընդհանուր ռազմավարության պատասխանատվությունը:

Գերմանիայի բուհերի կառավարումն իրականացվում է երկու մոդելով՝ կա՛մ միանձնյա՝ նախագահի կամ ռեկտորի գլխավորությամբ, կա՛մ կոլեկտիվ՝ նախագահական կոմիտեի միջոցով, որի կազմի մեջ են մտնում նախագահը, նախագահի տեղակալը եւ կանցլերը (գլխավոր վարչական պաշտոնյան):

Վերջին ժամանակաշրջանում մեծ ուշադրություն է դարձվում բուհերի կորպորատիվ կառավարման մոտեցմանը: Դրա հետ կապված՝ մեծանում է կոլեգիալ մարմինների կառավարման դերը (սենատի եւ ասամբլեայի)՝ բուհե-

րի ղեկավարման մակարդակով եւ Դեպարտամենտների խորհուրդների՝ բուհերի ստորաբաժանումների մակարդակով), որոնք ունեն գիտակրթական գործընթացի կազմակերպմանը մասնակցելու իրավունք:

Գերմանիայի բարձրագույն կրթության համակարգը բնութագրվում է հնագույն համալսարանական ավանդույթների եւ ինովացիոն մեթոդների կրթության կառավարման հարմոնիկ համադրությամբ, ինչպես նաեւ ֆունդամենտալ տեսական կրթության եւ գիտահետազոտական գործունեության համադրությամբ, նաեւ բարձրագույն կրթության առավել մատչելիությամբ եւ բարձր որակով:

Ի տարբերություն Հայաստանի՝ Ֆրանսիայում եւ Գերմանիայում գոյություն ունի եւ ակտիվ գործում է «ակադեմիական ազատություն»՝ հասկացությունը, որը թույլ է տալիս ցանկացած ուսումնասիրվող առարկաների ցանկը եւ համատեղել ուսուցման գործընթացը գիտական հետազոտությունների հետ:

ՀՀ, Ֆրանսիայի եւ Գերմանիայի բարձրագույն կրթության համակարգերի ֆինանսավորումն իրականացվում է հետեւյալ կերպ.

- Հայաստանում՝ պետական բյուջեի եւ արտաբյուջետային միջոցներից (ֆոնդեր, գրանտներ, կրթական ծրագրերի համար ֆիզիկական անձանց կողմից վճարում եւ այլն),

- Ֆրանսիայում՝ պետական բյուջեից, համայնքների եւ դեպարտամենտների միջոցներից,

- Գերմանիայում՝ պետական բյուջեից, հողերի, խոշոր քաղաքների, հոգաբարձուների խորհրդի եւ գերմանական համայնքների միջոցներից:

Ընդհանրացնելով ՀՀ, Ֆրանսիայի եւ Գերմանիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման մարմինների գոր-

ծունեության համեմատումը՝ հանգում ենք հետեւյալ եզրակացությունների:

- Հայաստանի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման կարեւոր տարբերություններից է ՀՀ բարձրագույն կրթության համակարգի կառավարման ապակենտրոնացված բնույթը, Ֆրանսիայում՝ կառավարման կենտրոնացված բնույթը, իսկ Գերմանիայում՝ բարձրագույն կրթության համակարգի կառավարման խառը բնույթը:

- Հայաստանի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման օղակներ են համարվում արտաքին եւ ներքին կառավարման մարմինները: Սակայն այստեղ էլ առկա են որոշ տարբերություններ: Դրանք են՝

- Հայաստանում բարձրագույն կրթության համակարգի կառավարման արտաքին մարմինը ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունն է, Ֆրանսիայում՝ Ֆրանսիայի ազգային կրթության նախարարությունը, իսկ Գերմանիայում՝ Գերմանիայի կրթության եւ մշակույթի նախարարությունը, ինչպես նաեւ՝ Գերմանիայի հողերի կրթության եւ մշակույթի նախարարների մշտական կոնֆերանսը:

- ՀՀ, Ֆրանսիայի եւ Գերմանիայի բարձրագույն կրթության համակարգի կառավարումն ունի հետեւյալ ներքին մարմինները. Հայաստանում՝ համալսարանական խորհուրդը, ռեկտորների խորհուրդը, ռեկտորը, գիտխորհուրդը, ռեկտորի օգնականը, ֆակուլտետների ղեկավարները, ամբիոնների վարիչները, Ֆրանսիայում՝ համալսարանի խորհուրդը, ռեկտորների խորհուրդը, ռեկտորը, գիտխորհուրդը, ռեկտորի օգնականը, ֆակուլտետների ղեկավարները, ամբիոնների վարիչները, Գերմանիայում՝ բուհերի ռեկտորների

համաժողովը, ռեկտորը, գիտխորհուրդը, ռեկտորատը, ֆակուլտետների ղեկավարները, ամբիոնների վարիչները:

- Ֆրանսիայի եւ Գերմանիայի բուհերին բնորոշ է «ակադեմիական ազատությունը», որը բացակայում է Հայաստանում:

- Գերմանիայի եւ Ֆրանսիայի բուհերը հիմնականում ֆինանսավորվում են պետական բյուջեով: Հայաստանում պետական ֆինանսավորումն իրականացվում է պետպատվերի շրջանակներում (կազմելով մի փոքր տոկոս) եւ ուսուցումը հիմնականում վճարովի է (վճարում են ֆիզիկական անձինք):

Այսպիսով՝ մեր կողմից նշվեցին մի շարք հիմնական առանձնահատկություններ, որոնք բնորոշ են Հայաստանի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման մարմիններին:

Մերի ԱՎԵՏԻՍՅԱՆ
Մանկավարժական գիտ. թեկնածու

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 15.01.2018թ..

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ